Azg Ազգ

6 ՄԱՅԻՍ 2011 ՈՒՐԲԱԹ 81(4700)

ISSN: 1829-1651

Կաթողիկոսը մեկնեց Հարավային Ամերիկա

Գարեգին Բ կաթողիկոսը երեկ հովվապետական այցով մեկնեց Հարավային Ամերիկա: Մայր աթոռից հայտնում են, որ Գարեգին Բ-ն մայիսի 6-10 հովվապետական այց կկատարի Բրազիլիայի հայոց թեմ, մայիսի 10-12-ը՝ Ուրուգվայի հայոց թեմ, մայիսի 12-21-ը՝ Արգենտինայի հայոց թեմ: Մայիսի 21-25-ը նա կայցելի նաեւ Չիլիի եւ Վենեսուելայի հայկական համայնքներ: Գարեգին Բ-ին ուղեկցում են ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, Մայր աթոռի տեսուչ Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը, գավազանակիր Անանիա աբեղա Ծատուրյանը, կաթողիկոսական գրասենյակի քարտուղար Ադամ քահանա Մակարյանը եւ Մայր աթոռի բարերար Ջեյմս Գալուստյանը:

«Սեւակի միջադեպը ոչ թե «դժբախտ պատահար» է, այլ ապրիլի 24-ին ծրագրված սպանություն»

Այս կարծիքն է հայտնել թուրքահայ զինծառայողի ընտանիքի դատապաշտպանը

ՀԱԿՈԲ ՉԱՔԻՐՅԱՆ

Ապրիլի 24-ին, երբ համայն հայությունը ոգեկոչում էր Մեծ եղեռնի զոհերի հիշատակը, եւ աշխարհի տարբեր երկրներում՝ Թուրքիան ներառյալ, 1,5 միլիոն զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ էին կազմակերպվում, հանկարծ Դիարբեքիրից ոչ հեռու, Բաթմանի Կոզլաք գավառում, զորացրվելուց 23 օր առաջ սպանվեց թուրքահայ զինծառայող Սեւակ Շահինը: Նրա հուղարկավորությունը տեղի ունեցավ ապրիլի 27-ին, Ստամբուլի Սուրբ Վարդանանց եկեղեցում:

Ապրիլի 29-ի համարում անդրադարձել էինք Սեւակ Շահինի հուղարկավորությանը: Դրա հետ նաեւ նշել էինք, որ սպանության պաշտոնական վարկածը կատակելու պահին Սեւակի ընկերոջ արձակած պատահական կրակոցն է: Սակայն միաժամանակ հաշվի էինք առել սպանության կատարման օրը, թուրքական իրականությանը յուրահատուկ հայկական դավադրության որոնումների շարունակականությունը, որը թուրք հասարակության մեջ հայ էթնոմիմը հայհոյանք է դարձրել, Հայոց ցեղասպանության թուրքական պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության մարտնչող բնույթը, թուրքական պետական կառույցների եւ քաղաքական կուսակցությունների հայատյացության դրսեւորումները: *Տես էջ 3*

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Լիտվայի նախագահն այցելեց Ծիծեռնակաբերդ

Երեկ Լիտվայի նախագահ Դալիա Գրիբաուսկայտեն այցելել է Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Ծիծեռնակաբերդում Գրիբաուսկայտեն ծաղկեպսակներ դնելուց հետո այցելել է Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ եւ գրառում կատարել հուշագրում, Լիտվայի նախագահը նաեւ եղեւնի է տնկել Հիշողության պուրակում: Նշենք, որ 2005-ի դեկտեմբերի 15-ին Լիտվայի խորհրդարանը միաձայն ճանաչեց եւ դատապարտեց Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը: Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը Լիտվայի նախագահին հանձնեց թանգարան-ինստիտուտի թողարկած «Ֆրիտյոֆ Նանսենի անվան» երախտագիտության մեդալ:

ԵԱՀԿ-ում նախագահող Լիտվայի նախագահի տարածաշրջան կատարած այցն ավարտվեց հենց Ծիծեռնակաբերդում, մայիսի 4-ին Գրիբաուսկայտեին ընդունել էր ՀՀ նախագահը, իսկ Երեւան նա ժամանեց Բաքու եւ Թբիլիսի այցելելուց հետո:

Հ. Ա.

Ինչ է ուզում Մեթյու Բրայզան Ադրբեջանի շրջաններից

ՀՈՎԻԿ ԱՔՅԱՆ

Վերադառնալով Թբիլիսիից, որտեղ, հիշեցնենք, օրեր առաջ, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, տեղի ունեցավ Հարավային Կովկասում ամերիկյան դեսպանների հավաք, Բրայզան այլ բավական ուշագրավ ուղեւորություն ձեռնարկեց: Հարեւան երկրում ԱՄՆ դեսպանը այցելեց Ադրբեջանի տարբեր շրջաններ՝ Իսմայիլլան, Օգուզի, Շեֆիի, Մինգեչեվիրի, Դաշքեսանի եւ Գյանջայի: Հետաքրքրական պատահականությամբ նույն օրերին երկրի շրջաններ այցելություններ ձեռնարկեց նաեւ նախագահ Իլհամ Ալիեւը: Վերջինս մասնակցեց Սաբիրաբադ-Գասըմլի-Նարլըգ-Գարագաշլի 15-կիլոմետրանոց ավտոճանապարհի վերաբացմանը, որը փլուզվել էր Քուռ-Արաքս գետերի վարարումից: Իսկ ամերիկյան դեսպանի ուղեւորության պատճառը կապված է ամերիկյան Խաղաղության կորպուսի ստեղծման 50-ամյակի հետ: Համենայն դեպս՝ Բաքվում ամերիկյան դեսպանատան պաշտոնական մեկնաբանությունը վերոհիշյալն է: Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ դեսպան Բրայզան, ընդգծելով, որ «Ադրբեջանի յուրաքանչյուր շրջան յուրովի գեղեցիկ է», ցանկություն է հայտնել կրկին նման ուղեւորություն իրականացնել. «Այցելությունը Ադրբեջանի շրջաններ մեծ տպավորություն թողեց: Մենք հանդիպումներ ունեցանք շրջանների գործադիր իշխանությունների հետ, եղանք հանրակրթական դպրոցներում, ամենուր մեզ գեղազանց ընդունելություն ցուցաբերվեց: Ես կրկին կցանկանայի իրականացնել նման ուղեւորություն՝ էլ ավելի խորացնելու ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունները»: Շրջաններում՝ մասնավորապես երբեմնի հայաբաս Դաշքեսանում, Բրայզան, «իմիջայլոց» կրկին շեշտել է, որ ինքը ակնառես եղավ հինավուրց հուշարձանների: *Տես էջ 8*

Էռնեստ Վարդանյանն ազատ արձակվեց

Ինչպես տեղեկացնում է «Ազատություն» ռադիոկայանը՝ հղում անելով Մերձդնեստրի պաշտոնական «Օլիվիա պրես» գործակալությանը, Մերձդնեստրում ազատ է արձակվել հայազգի լրագրող Էռնեստ Վարդանյանը: Երեկ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Մերձդնեստրի նախագահ Իգոր Սմիռնովը հայտնել է, որ Մամուլի ազատության համաշխարհային օրվա կապակցությամբ ներում է շնորհել Էռնեստ Վարդանյանին: Էռնեստ Վարդանյանը ձերբակալվել էր 2010 թվականի ապրիլին՝ լրտեսության եւ հայրենիքի դավաճանության մեղադրանքներով:

Դեկտեմբերի 16-ին Մերձդնեստրի գերագույն դատարանը նրան դատապարտել էր 15 տարվա ազատազրկման: Իգոր Սմիռնովն ասել է, որ լրագրողին ներում շնորհելու խնդրանքով իրեն դիմել են արտասահմանյան դիվանագետներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ, վերջին դիմողներից է եղել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Հ. Ա.

Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Ռոբերտ Էլիբեկյանի ստեղծագործական դիմանկարը՝ ըստ Պողոս Հայթայանի,՝ նկարչի ծննդյան 70-ամյակի առիթով:

Գրական առնչություններ. «Գուրգեն Մահարին եւ ռուս գրականությունը», Գրիգոր Աճեմյանի ներկայացմամբ:

Գաֆեսճյան արվեստի կենտրոնում տեղի ունեցած Գ. Գյուրջիեւի երաժշտության կատարման առիթով Արթուր Ավանեսովի «Մտորումներ ներդաշնակության մասին» հրապարակումը: «Սփյուռքահայ նկարիչներ» շարքից «Վշտի ու տառապանքի կրողը՝ Աշոտ Զորյան», ըստ Հակոբ Ծուլիկյանի:

Բախտիար Հովակիմյանի անդրադարձը անցած դարասկզբներին Անդրկովկասում եւ Սփյուռքում բեմական գործունեություն ծավալած Հովհաննես Զարիֆյանին եւ ԱՄՆ-ում նրա վերջին՝ «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի առաջին բեմականացմանը:

Հիշողությունների էջերից. Ռոմեն Կոզմոյան. «Քեսաբ», 1983 թ.:

Արմանուշ Կոզմոյանի 30 տարի առաջվա անդրադարձի այժմեականությանը. «Էսթիզ Վարդես Պետրոսյանի «Մենավոր ընկուզենի» վեպի թարգմանության»:

Մ. Ք.

Բացվեց «հայերի պահապան հրեշտակի» Լեփսիուսի հիշատակի տունը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Քաղաքական, եկեղեցական գործիչների, գիտնականների ու հասարակության ծանոթ շերտերի սվար ներկայությամբ է մայիսի 2-ին հանդիսավորապես բացվեց Պոտսդամում գտնվող Յոհաննես Լեփսիուսի հիշատակի տունը: Ի թիվս այլոց բացման արարողությանը ներկա են եղել Բրանդենբուրգ երկրամասի գիտության, մշակույթի եւ հետազոտության նախարար պրոֆեսոր Սաբինե Քունսթը, Պոտսդամի քաղաքագլուխ Յանն Յակոբսը, հրավերին չեն արձագանքել Բեռլինում Թուրքիայի դեսպանը եւ Կանաչների կուսակցությունը ներկայացնող, Եվրոպայում հանդուրժողի մեծ համարում ունեցող Չեմ Էոզդեմիրը: 2002-ին Թուրքիայի դեսպանը փորձում էր արգելք հանդիսանալ Լեփսիուսի հիշատակի տան գործարկմանը: Ապարդյուն:

Այժմ 12 տարվա երկար ճանապարհից հետո հիմնանորոգված 280 քառակուսի մետր գործածելի տարածքն ընդգրկում է կոնֆերանսի դահլիճ, գիտական աշխատասենյակներ, 2010-ին մահկանացուն կնքած լեփսիուսագետ Հերմանն Գոլցի՝ 5500 հատոր հատուկ գրականություն ամբարող գրադարանը, արխիվը, ինչպես նաեւ չորս սենյակներում ներկայացվող հայոց պատմությանն ու մշակույթին, ցեղասպանության մասին պատմող ցուցադրությունները, որ մասամբ նաեւ ասվածաբան, մարդասեր, 1915-ի մարդկության դեմ կատարված առաջին Աղետի ականատես Յոհաննես Լեփսիուսի կենսագրությունն է ամփոփում: Տան կահույքը հինը չէ, վերապատրաստված է, փոխարենը աշխատասենյակն այն տեսքն ունի, ինչ 1908-ին, երբ Լեփսիուսը հիշյալ առանձնատուն է տեղափոխվել եւ բնակվել այնտեղ մինչեւ 1925 թվականը: 1926-ին իտալական Թիրոլի մայրաքաղաք Մերանում մահկանացուն կնքած հոգեւորականի կյանքի գործն այլեւս ոգեղեն ներկայություն է սանում Պոտսդամում՝ հիշատակի վայրը դարձնելով մշակութային ու թեմատիկ ցուցահանդեսների, գիտահետազոտական աշխատանքի ու հանդիպման կարեւոր մի հասցե:

Լեփսիուսը 20-րդ դարի մեծ ոճիր Հայոց ցեղասպանության ականատեսն ու վավերագրողն է: Իր հեղինակած «Զեկույց Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» վավերաթուղթը Լեփսիուսը 1916-ի ամռանը Պոտսդամից ուղարկում է Ռայխսթագի պատգամավորներին եւ թերթերի խմբագրություններ, փորձում ճեղքել կառավարության համաձայնած լռությունը: Նրա ջանքերով ստեղծված Հայ օգնության միության շնորհիվ փրկվում են 20000 հայ որբեր ու այրիներ: Ինչպես օրեր առաջ իրազեկել էինք «**Ազգում**», հանդիսավոր բացումը կատարվեց ԳԴՀ պետնախարար, մշակույթի եւ տեղեկատվության հարցերով նախարար Բերնդ Նոյմաննի ձեռամբ:

Տես էջ 5

ԱԶԳ

Ընթացիկ

«Ադրբեջանցիների fառոզչությունը գիտական ֆանտաստիկայի եւ ցնդաբանության ոլորտ է մտել»

Ամեն տարի այս օրերին բոլորս հիշում ենք Շուշիի հաղթանակը, գնահատում 1992 թվականի մայիսի 8-ի ու 9-ի բեկումնային օրերը Արցախի ազատագրման պատմության մեջ, նկարագրում ենք «Հարսանիք լեռներում» փառավոր օպերացիան, որը փայլուն ղեկավարեց ու հաղթական ավարտի հասցրեց Արկադի Տեր-Թադեւոսյանը՝ Կոմանդոսը, արցախյան ազատամարտի մեր մյուս փայլուն հրամանատարների եւ զինվորականների հետ համատեղ: Այս օրերին ամեն տարի Ադրբեջանը կատաղում է՝ սադրանքների գնում ջիհման գծում, ամեն տեսակ բարբաջանքներով լցնում վիրտուալ տարածքը. էհ, մենք մեր ոխերիմ «բարեկամի» գարնանային սրացումներին ծանոթ ենք ու պատրաս: Պաշտպանության նախարարությունն էլ այս տարի իր նոր նախաձեռնությամբ կարծես պատասխանում է այդ սրացումներին, քանի որ այս օրերին ԳԱԱ-ում, ԵՊՀ-ում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում հնչում են մեր երիտասարդ եւ ավագ սերնդի գիտնականների գնահատականները՝ որպես պատասխան ադրբեջանական ագրեսիվ եւ ռազմամոլ fառոզչության, որպես հիշեցում 1992-ին կրած պարտության: Լավ է, պատմության թուրf-ադրբեջանական կեղծման տանդեմը մերկացնող հիանալի զեկուցումներ կարելի էր լսել այս օրերին: Երեկ «Պատմություն եւ մշակույթ. ընդդեմ կեղծիքի եւ ոտնձգության» գիտաժողովի՝ ԳԱԱ-ում շարունակվող նիստի ընդմիջմանը փոքրիկ զրույց ունեցանք ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն **Աշոտ Մելքոնյանի** եւ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան **Էդիկ Մինասյանի** հետ՝ մի քանի հարցեր ուղղելով թեմայի շրջանակում:

- Այսպիսի գիտաժողովներն արդյունավե՞տ են Ադրբեջանի կեղծարարությանը պատասխանելու համար, եւ առհասարակ՝ գիտությունը, պետական կառույցները ի՞նչ միջոցներ պետք է օգտագործեն այդ ուղղությամբ:

Աշոտ Մելքոնյան.- Առայժմ սա գիտաժողով է, բայց հրապարակված նյութերը սեղմ, գիտաճանաչողական առումով շատ ավելի մատչելի տարբերակով թղթին կհանձնվեն եւ գրքույկների ձեւով կբաժանվեն մեր զինվորականությանը, իսկ օտար լեզուներով թարգմանելու պարագայում, ինչու չէ, հնարավոր կլինի տարածել նաեւ արտերկրում, համացանցով:

- Ադրբեջանն այժմ առավել մարտնչող եւ ագրեսիվ ձեւեր է օգտագործում՝ իր կեղծարարությունը տարածելու համար աշխարհում: Մեր գիտությունը պետական կառույցներին սպասարկուի դերո՞ւմ պետք է լինի այս պարագայում, թե՞ նաեւ պետք է նախաձեռնողականություն դրսեւորի:

Ա.Մ.- Ես բազմիցս առիթ եմ ունեցել ասելու Ադրբեջանի ագրեսիվության պատճառները: Ավելի վաղ այդ երկիրն ավելի արդյունավետ միջոցներ կիրառեց fառոզչության առումով: Խնդիրն այն էր, որ ռազմի դաշտում մենք հաղթանակ էինք տարել, եւ մեզ թվում էր, թե fառոզչության դաշտում անելիք չունենք՝ զինվորի զենքն ուր հասել էր, այնտեղ խնդիրը լուծված էր: Առավել եւս՝ որ fառոզչական դաշտում մենք էինք հարձակողական դիրքում գործում, որովհետեւ հայրենիք էինք կորցրել, որի մի զգալի մասը հետո ազատագրեցինք: Ադրբեջանի պարագայում լրիվ հակառակը տեղի ունեցավ. նրանք տանուլ տալով ռազմի դաշտում՝ fառոզչական դաշտում անցան հարձակման եւ, ինչու չէ, որոշ հաջողություններ արձանագրեցին: Բայց հիմա նրանց առաջն արդեն վաղուց գիտական հսկողությունից դուրս է եկել, եւ կարող եմ ասել, որ ֆանտաստիկայի եւ ցնդաբանության ոլորտ է մտել արդեն, այնպիսի անհեթեթ բաներ են գրում, որ աշխարհի գիտական հասարակայնությունը այլեւս լրջորեն չի վերաբերվում ադրբեջանցիներին: Ջիա Բունիաթովի ժամանակ, 1960-70-ական թվականներին ադրբեջանցիները շատ fողարկված եւ նրբորեն էին իրենց fառոզչությունը տանում, բայց եթե այսօր Ադրբեջանի նախագահի մակարդակով հայտարարվում է, որ առհասարակ Հայաստան երկիր չի եղել ու Արեւելյան Հայաստանն Արեւմտյան Ադրբեջանն է, եւ ռուս հայտնի գիտնականներն էլ արձագանքում եւ ասում են՝ սա ցնդաբանություն է արդեն, բնականաբար՝ այստեղ գիտականության մասին խոսք իսկ լինել չի կարող: Վտանգն այստեղ այլ է. նախապատերազմյան fառոզչություն հիշեցնող վիճակ է ադրբեջանցիների առաջը՝ անգրագետ, կիսագրագետ զանգվածին հայության նկատմամբ ուղղակի թշնամաբար տրամադրելու իմաստով: Նրանց առաջի մեջ ես տեսնում եմ պատերազմի fառոզչություն, դա վտանգավոր է: Դրան մենք պետք է հակադրենք անաչառ, օբյեկտիվ հողի վրա իրականացվող հակաfառոզչություն: Ասենք, որ պաշտպանության նախարարության հետ մշտապես համագործակցելով՝ դասախոսություններ ենք կարդում մեր զինվորների համար: Հասկացնում, որ գործ ունենք մի ժողովրդի հետ, որ-ը մեր նկատմամբ գործածում է «դուշման»՝ «թշնամի» բառը, իսկ «հարեւան» բառը նրանց լեքսիկոնից հանված է: Եվ fառոզչական դաշտում էլ լայն առումով հոգեբանորեն մեր հասարակությանը, սփյուռքին պետք է կարողանաք ուղղորդել նաեւ այս ճակատում հաղթանակ արձանագրելու առաքելությանը:

- Շուշիի ազատագրման հերթական տարեդարձն է մայիսի 8-9-ին, ամեն տարի այդ օրերին խոսում ենք այդ իրադարձությանության բեկումնային լինելու մասին: Պատմագիտական առումով արժեվորվե՞լ է Շուշիի եւ առհասարակ Արցախի ազատագրումը:

Էդիկ Մինասյան.- Շուշիի ազատագրումը հաղթողի հոգեբանություն ներարկեց մեզ, որից հետո սկսվեց հաղթանակների շարքը: Շուշիի ազատագրումը նախ թույլ տվեց ցամաքային ճանապարհը բացել, հետեւեց Լաչինի ազատագրումը, հետո՝ ազատագրական հաղթաշավը: Ազատագրումն, իհարկե, ձեռք բերվեց հերոսական պայքարի շնորհիվ: Եվ Արցախի ազատագրման դրվագներին եւ Շուշիի հաղթանակին մեր պատմության մասնագետներն անդրադարձներ արել են, բայց արժեւորել միշտ պետք է, հատկապես՝ ավելի հանգամանորեն արժեւորումը, մեր պատմության այդ ժամանակի բեկումնային փուլ լինելը քննելո՛վ եւ վերլուծելո՛վ ի մի բերելը: Շուշիի գնահատական հարցը շատ արմատական եւ ավելի ընդգրկուն պետք է լինի, ցույց տվի նաեւ նրա անմիջական կապը ազատագրական պայքարի մյուս մարտերի հետ: Պատմաբանների մի քանի աշխատություն կա արդեն այդ առիթով՝ Մեր Հայրենյաց «Շուշիի հատուկ օպերացիան» թեկնածուական թեզը, Հրանտ Աբրահամյանի, էլի մեկերկու հեղինակի գիրք (**Է. Մինասյանը եւս անդրադարձներ արել է այդ թեմային-Մ.Խ.**): Հաղթանակն, այո, մեր պատմության ամենաարժեքավոր դրվագներից է, սակայն դիվանագիտորեն դեռ չենք

կարողանում ամրագնդել այն: Այնինչ՝ շատ անհրաժեշտ է այդ դիվանագիտական հետագա ամրագնդումը: Այսօր առաջընթաց կհամարվեր, եթե Արցախն ինքը մասնակցեր ղարաբաղյան բանակցություններին՝ Լիսաբոնից հետո դուրս մղվեց գործընթացից եւ ընդհանրապես այլեւս չմասնակցեց, հայկական կողմը շատ անելիքներ ունի այդ իմաստով: Փոքր առաջընթաց կոչվածը գրանցվել է, բայց ասել՝ դրական ձեռքբերումներ, դեռեւս չենք կարող: Հայաստանի նախագահի վերջին հայտարարությունը, թե Ադրբեջանը ոչ մի առիթ բաց չի թողնում, որպեսզի ռազմամոլական հայտարարություններ անի եւ առիթ է փնտրում խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու, ռազմական ավանտյուրայի համար, տեղին էր: Մինսկի խմբի ձեւաչափում աշխատանքներ տարվում են, բայց արդյունքի դեռ չեն բերում վիճելի հարցերի վերաբերյալ: Վերջին՝ Մադրիդյան փաստաթուղթը, որը պահանջում է տարածքային զիջումներ՝ տարածքային ամբողջականության եւ ինքնորոշման իրավունքի վերաբերյալ քննարկումների պրոցեսում է: Մի խոսքով՝ վերջնական դրական արդյունք այս ուղղությամբ դեռ չի եղել, որովհետեւ Ադրբեջանն ինքն է խախտում հրադադարն ամեն անգամ եւ ամեն անգամ իր միջամտությամբ թույլ չի տալիս հարցը վերջնական լուծման բերել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցեղասպանությունից փրկվածներին կտրվի 25 հազար դրամ ամենամսյա օգնություն

Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան Թուրքիայի այլ վայրերում մինչեւ 1915 թվականը ծնված եւ Հայոց ցեղասպանությունը վերապրած հայերին կառավարության երեկ ընդունած որոշմամբ կտրվի 25 հազար դրամ ամենամսյա դրամական օգնություն՝ վճարելով յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակի հետ ընդհանուր գումարով:

Կաթը կտարբերվի կաթնային ըմպելիքից

Կաթնամթերք արտադրողները պետք է մակնշեն իրենց արտադրանքի վրա «կաթնային ըմպելիք» անվանումը, եթե այն ստացվել է թանձրացրած, խտացրած կամ չոր կաթից եւ ջրից ստացված կաթից: Կառավարության երեկ ընդունած որոշումն այդ մասին պայմանավորված է կաթի եւ կաթնամթերքի արտադրության ոլորտում օգտագործվող անարատ կաթի պահանջարկի ավելացման, ինչպես նաեւ սպառողների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Ներկայումս կաթի եւ կաթնամթերքի արտադրությունում օգտագործվում են զգալի քանակությամբ անարատ չոր կաթ, չոր յուղազերծ կաթ, կաթնային չոր շիճուկ եւ անարատ չոր սերուցք, որոնց մասին սպառողը լիարժեք տեղեկություն չի ստանում: Չոր կաթի համատարած օգտագործման հետեւանքով նվազում են անարատ կաթի մթերման ծավալն ու գինը:

Ձկնաբուծական ընկերություններում կներդրվի ՎԱՎԿԿՀ համակարգը

Ձկնաբուծական մթերքների արտադրության ձեռնարկություններում վտանգի աղբյուրների վերլուծության եւ կրիտիկական կետերի հսկման՝ ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման միջոցառումների ծրագիրը երեկ հաստատեց կառավարությունը: Այդ համակարգի ներդրումը պարտադիր պահանջ է համարվում մի շարք, այդ թվում՝ Եվրոմիության երկրներում, մինչդեռ Հայաստանում ներդրված չէ: Ենթադրվում է, որ համակարգի ներդրումը կերաշխավորի թողարկվող մթերքի անվտանգությունը՝ նպաստելով արտահանման խթանմանն ու սպառողների շահերի պաշտպանությանը:

Ոռոգման համակարգ կստեղծվի Էրեբունու անտառների համար

«Երեւանի անտառտնտեսության Էրեբունու անտառտեսության 51 հա տարածքի անտառապատման աշխատանքներ» ծրագրով ոռոգման համակարգի ստեղծման եւ ցանկապատման աշխատանքները ֆինանսավորելու նպատակով կառավարությունը գյուղատնտեսության նախարարությանը հատկացրել է 59 միլիոն դրամ: Կիսաանապատային գոտու անբարենպաստ պայմաններում ոռոգման համակարգի ստեղծման եւ ցանկապատման միջոցով կանտառապատվի 20 հեկտար տարածք:

Կենսագազի այրման կառույցը՝ Երեւանին

Հայաստանի սեփականությունը հանդիսացող, որեւէ պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում չհաշվառված «Շիմիձու» կորպորացիայի կողմից Նուբարաշենի թափոնակուտակչի տարածքում կառուցված 1 մլրդ 25 մլն դրամ արժեքով կենսագազի հավաքման եւ այրման կառույցը կառավարության որոշմամբ երեկ նվիրվեց Երեւանի քաղաքային համայնքին:

Մինչեւ 27 տարեկան զինծառայությունից խուսափածներին վերադառնալու նոր ժամկետ

Մինչեւ 2011-ի մայիսի 1-ը 27 տարին լրացած, պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացիներին հնարավորություն կտրվի սահմանված ժամկետում մուծելու համապատասխան վճարը, վերադառնալու հայրենիք եւ ազատվելու քրեական հետապնդումից: Կառավարությունը երեկ հավանություն տվեց «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» օրենքում այդ փոփոխությանը, քանի որ այդ հնարավորությունից նախկինում կարող էին օգտվել մինչեւ 2010-ի նոյեմբերի 1-ը:

Ա. Մ.

Փոփոխություններ ոստիկանությունում

Ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի հրամանով ՀՀ ճանապարհային ոստիկանության հետաքննչական բաժանմունքը վերակազմավորվել եւ դարձել է ՃՈ հետաքննչական բաժին: Նշված բաժնի պետ է նշանակվել ոստիկանության մայոր Հարություն Սարգարյանը՝ ազատվելով ոստիկանության քննչական գլխավոր վարչության, Երեւանի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի պետի պաշտոնից: Իսկ ահա ոստիկանության փոխգնդապետ Աշոտ Ահարոնյանը նշանակվել է ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության պետ: Մինչ այդ նա այդ վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարն էր:

Կարկտահարության վնասները Արագածոտնի մարզում

Մայիսի 4-ին՝ ժամը 18.30-ից 19 Արագածոտնի մարզում տեղացել է կարկուտ, որի չափերը գերազանցել են ընկույզի չափերին: «Ազգը» զրուցեց Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի հետ եւ փորձեց պարզել, թե ինչ հետեւանքներ է թողել կարկուտը մարզի համայնքներում: Մարզպետը ասաց, որ զգալիորեն տուժել են մարզի 22 համայնքներ: Կարկտահարությունից անմիջապես հետո մարզպետը եւ ՀՀ գյուղնախարար Սերգո Կարապետյանը այցելել են տուժած բնակավայրեր: Աշտարակի տարածաշրջանի Կոշ, Ուջան, Ավան, Լեռնարոտ, Ջորափ, Ոսկեվազ, Օշական եւ հարակից գյուղերում պտղատու այգիներն ու այլ մշակաբույսերը վնասվել են 80-90 տոկոսով: Մյուս համայնքներում կարկուտից կոտրվել են ծառերի ճյուղերը, վնասվել են ցանքատարածություններն ու ծաղկած մրգատու այգիները: Վնասի չափերը ճշտվում են: Սակայն 2-րդն օրն է, որ կարկուտից հետո անձրեւները շարունակվում են:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ
Աշտարակ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Պետությունը կկանգնի գյուղացու կողքին»

Պարարտանյութերը, քիմիկատներն ու գյուղտեխնիկան կազատվեն ԱԱՀ-ի գանձումից

Ավելի քան երկու տասնյակ ագրովերամշակման ոլորտի խոշոր ընկերությունների ղեկավարների մասնակցությամբ նախագահ Սերժ Սարգսյանի հրավիրած խորհրդակցության առանցքային հարցերն էին՝ ագրովերամշակող արդյունաբերության եւ մթերումների կազմակերպման ընթացիկ խնդիրները, հարկային, մաքսային համակարգում իրականացվող բարեփոխումները:

«Երեւան գարեջուր» ՓԲԸ-ում՝ ՀՀ գյուղատնտեսության եւ ֆինանսների նախարարների, ՊԵԿ նախագահի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում նախագահը նշեց, որ նման հանդիպումների նպատակն է ճնարկել տարբեր ոլորտների տնտեսվարող խոշոր ընկերությունների ներկայի եւ ապագայի զարգացման ծրագրերն ու գործընթացը:

«Գործընթաց ասելով նկատի չունեմ զուտ միջոցների ներգրավում պետական բյուջե, այլ՝ այդ գործընթացի պարզեցում, տնտեսվարողների համար ավելորդ հոգսերից ազատում, ակնկալելով, որ տնտեսվարողները կանեն առավելագույնը, որպեսզի իրենց հարկային պարտավորությունները կատարեն, քանի որ մենք եկամուտների, թոշակներ, աշխատավարձեր վճարելու, պաշտպանության ծախսեր կատարելու այլ աղբյուր չունենք: Դրա համար էլ այս գործընթացում կարեւորում ենք նշված ծախսերի կատարման առումով որեւէ ռիսկ չստեղծելը»:

Անդրադառնալով ոլորտի խնդիրներին՝ նախագահ Սարգսյանը ներկայացրեց մի շարք դրույթներ՝ հորդորելով տնտեսվարողներին չմոռանալ դրանց մասին ու կատարել:

«Անընդունելի է, երբ դուք պայմանագրեր եք կնքում գյուղացիների հետ, այնուհետեւ՝ կաղված իրավիճակից, բերքի քանակից եւ այլն, սկսվում են որոշակի ճնարկումներ գների վերաբերյալ: Սարօրինակ պատկեր է սացվում, երբ երկու հարեւան մարզերում գրանցվում են գյուղմթերքի տարբեր գներ: Սա ճիշտ չէ: Ամենաճիշտ մոտեցումն այն է, որ հենց սկզբից սկսեք պայմանագրի կնքումը, որպեսզի մարդկանց համար պարզ լինի, թե իրենց արտադրանքն ի՞նչ գնով են վաճառելու»:

Նախագահն ընդգծեց, որ գյուղացիներն ու տնտեսվարողները պետք է կարողանան օպտիմալ գին ամրագրել, որպեսզի հաջորդ տարի գյուղացին շահագրգռված լինի մթերք աճեցնելու, տնտեսվարողներն էլ հնարավորություն ունենան հաջորդ տարվա բերքը մթերելու եւ շահույթով աշխատելու:

«Վստահ եմ, որ հատկապես հիմա վերամշակողների համագործակցությունը կառավարության, կոնկրետ՝ գյուղնախարարության հետ, լինելու է ավելի արդյունավետ: Մեր պայմանավորվածությունները չեն փոխվել, եւ այս ընթացքում, կառավարությունն ու գյուղնախարարությունը լինելու են ձեր աջակիցը: Բոլոր խնդիրների առումով, գյուղնախարարությունը հանդես է գալու որպես պատասխանատու գործընկեր, իսկ աշնանը պետությունը կանգնելու է գյուղացու կողքին», ասաց նախագահը:

Խորհրդակցության ավարտին Պետական եկամուտների կոմիտեի նախագահ **Գագիկ Խաչատրյանը** լրագրողների հետ զրույցում ասաց, որ խորհրդակցության ժամանակ ներկայացվել են հարկային բարեփոխումների փաթեթն ու բիզնեսի հետ կաղված խնդիրները:

«Վերլուծությունները ցույց են տալիս, որ այս ոլորտում լուրջ անելիքներ ունենք»: Ոլորտի խնդիրներից Խաչատրյանն առանձնացնում է երկուսը՝ իրացման սեղմ ժամկետներն ու փաստաթղթաշրջանառությունը:

ՊԵԿ-ի նախագահի ներկայացմամբ՝ վերամշակման արդյունաբերության ոլորտում ցածր է ուղիղ հարկերի հավաքման տոկոսը, որոնք կազմում են ընդամենը 1 տոկոս հարկային վճարների ընդհանուր ծավալում, իսկ պետբյուջեի ընդհանուր հարկային մուտքերում՝ 13 տոկոս՝ այլ ոլորտների 25 տոկոսի դիմաց: «Պատրաստ ենք մի շարք աղրանախմբեր՝ պարարտանյութեր, քիմիկատներ ու գյուղտեխնիկա, սահմանին ազատել ԱԱՀ-ի գանձումից՝ խթանելով տնտեսության զարգացումը»:

Անդրադառնալով արտադրող եւ մթերող կազմակերպությունների միջեւ պայմանագրային հարաբերությունների հաստատման կարեւորությանը՝ գյուղնախարար **Սերգո Կարապետյանն** ասաց, որ պայմանագրում պետք է արտացոլվեն արտադրողի եւ մթերողի իրավունքներն ու պարտականությունները, ֆիքսված լինեն մթերման գներն ու վճարումների ժամկետները:

Գյուղնախարարի գնահատմամբ՝ ոլորտի զարգացմանը խանգարող հիմնական հանգամանքը արտադրանքի ոչ մրցունակությունն է.

«Պետք է քարտացվեն հոսքագծերը, ներդրվեն ժամանակակից սարքավորումներ, որպեսզի միջազգային շուկայում հայկական արտադրանքը մրցունակ լինի, քանի որ մեր տեղական շուկան հագեցած է եւ կա արտահանման խնդիր: Հաշվի առնելով, որ օրեցօր ավելանում է վերամշակող ձեռնարկությունների քանակը, դա հիմք է տալիս կարծելու, որ մրցակցության պայմաններում կբարձրանա նաեւ որակը»:

ՀԱՍՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Այսուհետեւ Orange-ում շաբաթ եւ կիրակի օրերն առանձնահատուկ են լինելու

Անվճար զանգեր հանգստյան օրերին

Երեւան, 5 մայիսի, 2011թ.: Այսօրվանից Orange-ի խոսենք կանխավճարային ծառայության բոլոր սակագնային պլանների բաժանորդները, ամեն անգամ միանվագ լիցքավորելով հաշիվը 1000 եւ ավելի դրամով, կստանան անվճար րոպեներ շաբաթ եւ կիրակի օրերին Orange ցանցի ներսում զանգելու համար, լիցքավորման պահից 31 օրվա ընթացքում: Ընդ որում, որքան մեծ լինի լիցքավորված գումարը, այնքան ավելի շատ անվճար րոպեներ կտրամադրվեն բաժանորդին: Օրինակ, եթե բաժանորդը լիցքավորի իր հաշիվը 1000 դրամով, կստանա 100 անվճար րոպե Orange-ի բաժանորդների հետ խոսելու համար, 1500-ի դեպքում՝ 150, 2000-ի դեպքում՝ 200 եւ այսպես շարունակ:

«Մեր ծառայությունների մեկնարկի օրից ճիշտ մեկուկես տարի է անցել, եւ այս ամբողջ ընթացքում մենք բազմաթիվ անակնկալներ ենք ներկայացրել մեր բաժանորդներին, որի արդյունքում արդեն բաժանորդների կայուն բազա ունենք: Այսօր բացառություն չէ, եւ վստահ ենք, որ այս առաջարկը կհետաքրքրի կանխավճարային ծառայության մեր բոլոր բաժանորդներին», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:

«Մեր ցանկությունն է, որ շաբաթ եւ կիրակի օրերը մեր բաժանորդների համար վերածվեն իսկական տոնի, եւ նրանք իսկապես վայելեն իրենց հանգիստը՝ չմտածելով ժամանակի մասին», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:

Այս առաջարկից օգտվելն ավելի հեշտ դարձնելու համար այսօրվանից Orange-ը լիցքավորման քարտերի շարքը համալրվեց եւս մեկով՝ 1000 դրամ արժողությամբ լիցքավորման քարտով, որն ունի մեկ ամիս վավերականության ակտիվ ժամկետ: Նոր լիցքավորման քարտն արդեն վաճառքում է եւ հասանելի կլինի թե Orange-ի 78 խանութներում եւ թե 7000-ից ավելի վաճառքի այլ կետերում:

ՕՐՎԱ ՀԱՆԳՈՒՊՈՒՄԸ

Տեր-Պետրոսյանն ու Ն. Փաշինյանը հանդիպեցին բանտում

Երեկ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում հանդիպել է «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի հետ: Նրանց զրույցը տեւել է մոտ մեկ ժամ: Հանդիպումից հետո «Ազատություն» ռադիոկայանի այն հարցին պատասխանելով, թե ինչու հիմա որոշեց այցելել Փաշինյանին, Տեր-Պետրոսյանն ասել է, թե հիմա մթնոլորտ է փոխվել, երկրում ուրիշ քաղաքական վիճակ է, եթե ավելի վաղ այցելության համար դիմեր, թույլ չէին տա. «Լուծվել են խնդիրներ, որոնք 3 տարի չէին լուծվում: Ես նկատի ունեմ ե՛ւ Ազատության հրապարակի արտոնումը հանրահավաքների համար, ե՛ւ մարտի 1-ի բացահայտման պաշտոնական հավաստիացումը, ե՛ւ քաղբանտարկյալների ազատ արձակման պրոցեսը, որը ավարտվելու է մայիսի 28-ին, ինչպես ես ասացի նախորդ հանրահավաքում: Գուցե մի քանիսը մինչեւ 28-ը դուրս գան: Այս ֆոնի վրա, բնականաբար, իմ խնդրանքը չէր կարող մերժվել»: Անդրադարձ անելով վերջին քաղաքական զարգացումներին՝ Տեր-Պետրոսյանը ընդգծել է, որ վերջին շրջանում իշխանությունների եւ հասարակության միջեւ բաց, հրապարակային, շարունակական երկխոսություն է ընթանում. «Պետք է գնահատել, ոչ թե ռեվերանսներ անել, խոսել ինչ-որ պայմանավորվածությունների մասին: Ո՛չ, գնում է բաց դիալոգ: Մենք մեր պահանջները, մեր խնդիրները, մեր ծրագրերը բաց ներկայացնում ենք իշխանություններին եւ հասարակությանը, եւ իշխանությունն էլ բաց պատասխաններ է տալիս դրան: Իհարկե՝ ոչ այնքան կոնկրետ եւ ուղիղ, ինչպես մենք ենք ասում, այլ ավելի մշուշապատ եւ այլն, բայց քայլեր են արվում, դա չի կարելի անտեսել», - նշել է նա: Վերջին հանրահավաքից հետո մասնակիցների մի մասի նստացույց անելու պահանջի մասով էլ ավելացրել է. «Ոչ մի բան էլ չի եղել, ժողովրդի մեծամասնությունը շատ ճիշտ հասկանում է այս ամբողջ պրոցեսը: Բնականաբար կան անհամբեր մարդիկ, պրոցեսը չհասկացող մարդիկ, որոնց թվում է, թե կարելի էր այլ ճանապարհով հարցեր լուծել: Ես վստահ եմ՝ այլ ճանապարհով մենք կկործանեինք բոլոր հարցերը»:

«Սեւակի միջադեպը ոչ թե «դժբախտ պատահար» է, այլ ապրիլի 24-ին ծրագրված սպանություն»

1-ին էջից

Ելնելով այս ամենից, չէինք բացառել, որ Սեւակ Շահինի հենց ապրիլի 24-ին կատարված սպանությունը լինի դիտավորություն, թուրքական ժխտողականության չարանենգ դրսեւորման արձագանքը եւ կրի՝ որպես ազդանշան, համայն հայությանը սաստելու բնույթ:

Մայիսի 5-ին BIA լրատվական գործակալությունը, վկայակոչելով հանգուցյալ Սեւակի ընտանիքի դատապաշտպան Ջեմ Հալավուրթին, մասամբ հաստատեց մեր կանխագուշակումը: Պարզվում է՝ Սեւակի այսպես կոչված ընկերը, որի իբր պատահական կրակոցից սպանվել է Սեւակը, Քըվանչ Աղաօղլուն է, հարում է ուլտրազգայնամոլ «Մեծ միասնություն» կուսակցության հրոսակներին այնպես, ինչպես «Ակօսի» խմբագրապետ Հրանտ Դինքի սպանության կազմակերպիչներից Յասին Հայալը, որն անդամագրվել էր այս կուսակցությանն առընթեր գործող «Ալփերեն» օջախների Տրապիզոնի մասնաճյուղում:

Գալով Դինքի սպանության մյուս կազմակերպիչ Էրհան Թունջելին, ապա նա էլ Տրապիզոն այցելելու օրերին անբաժան ուղեկիցն է եղել «Մեծ միասնություն» կուսակցության առաջնորդ, երկու տարի առաջ առեղծվածային վթարի զոհ դարձած Մուհսին Յազըջըօղլուի, որի ուղղաթիռն առ այսօր չպարզաբանված հանգամանքներում խորտակվել էր:

Ըստ երեւույթին սրան 70-ական թվականներին որպես գործիք սպանությունների մեջ օգտագործելուց հետո ոչնչացրել են: Ի դեպ, եթե հիշողությունս չի դավաճանում, 1995-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի ամբիոնից վարչապետ Թանսու Չիլլերը, նկատի ունենալով «Մեծ միասնություն» կուսակցության պատգամավորներին՝ առաջնորդով հանդերձ, բացականչել էր. «Դուք մինչեւ կոկորդն արյան մեջ թաղված մարդասպաններ եք: Ես ամաչում եմ մարդկությունիցս, քանի որ դուք էլ եք մարդ կոչվում»:

Այս ամենի առումով հատկանշական են Սեւակի ընտանիքի դատապաշտպան Ջեմ Հալավուրթի խոսքերը, որը մայիսի 1-ին եղել էր զորամասում: Նա, ըստ BIA գործակալության, ընդգծել է. «Ոման էլ միջադեպը համարվի «դժբախտ պատահար», հավանական է, որ սպանություն լինի»:

Դատապաշտպան Հալավուրթը, հիմնավորելու համար իր ենթադրությունը, հետեւյալ փաստարկներն է բերել.

«Կասկածյալ Աղաօղլուի ֆեյսբուքն ուսումնասիրելիս տեսանք, որ նա համակրում է «Մեծ միասնություն» կուսակցությանն ու թուրք-իսլամական սինթեզի կողմնակիցն է (սա այն տեսությունն է, ըստ որի՝ իսլամը միավորել է թուրքական ցեղերին, որոնք էլ իսլամական աշխարհը պաշտպանելով քրիստոնյաների ոտնձգություններից, նպաստել են վերջինի բարգավաճմանը, ընդարձակելով նրա սահմանները: Ի դեպ, այսպես կոչված այս տեսությունը պաշտպանում են ինչպես թուրք-ազգայնամոլները, այնպես էլ սոցիալ-դեմոկրատներն ու իսլամականները, այն տարբերությամբ, որ մի դեպքում առաջնային է դառնում պանթուրքիզմը, իսկ մյուս՝ պանիսլամիզմը, իհարկե, Թուրքիայի գլխավորությամբ).

Հանդիպեցինք կասկածյալի ազգայնամոլ դրսեւորումներին, որոնցից են Մուհսին Յազըջըօղլուի տեսագրություններն ու Աբդուլլահ Չաթլըի (Հռոմի պապի դեմ մահափորձ կատարած Աղջայի վերադասն էր, թուրքական պետության հրահանգով ԱՍԱԼԱ-ի դեմ գործողություններ է իրականացրել, միաժամանակ Ղարաբաղյան պատերազմի թեժ օրերին եղել եւ մութ գործարքների մեջ է մտել Ադրբեջանում).

«Դժբախտ պատահարի» վարկածը մեզ չի բավարարում, որքան էլ մեր ուսումնասիրության ընթացքում միջադեպի վկաներն այդպես ներկայացնեն.

Միջադեպը տեղի է ունեցել առավոտյան ժամը 11.00-ին, իսկ զորամասում վկաներին լսել են 18.00-ին միայն.

Ի վերջո, զորամասում գործում է վերադաս-ստորադաս համակարգը.

Ականատեսների վկայությունները իրարամերժ են, հետեւաբար մենք հավանական ենք համարում, որ այս միջադեպը ապրիլի 24-ին հատուկ ծրագրված սպանություն լինի»:

ԱԶԳ

Առողջապահական

Հիպերտոնիա՝ մեզանում տարածված հիվանդություններից մեկը

Հայկական բժշկական ասոցիացիան Երեւանում կատարել է մի հետազոտություն, որի արդյունքների համաձայն, քաղաքի չափահաս բնակչության 30 տոկոսը՝ մոտավորապես 200 հազար հոգի, ներկայումս հիպերտոնիա հիվանդություն ունի: Երեւանի գլխավոր սրտաբան **Պարունակ Զելվեյանն** ասում է, որ 200 հազար հոգուց էլ միայն կեսն է տեղյակ, որ առողջական նման խնդիր ունի, իսկ արդյունավետ բուժում սանում է հիպերտոնիկ հիվանդների ընդամենը 7 տոկոսը: Զրուցակիցս ցավով նշում է, որ հիպերտոնիային մահների արանքով նայելու պատճառով վաղը կամ մյուս օրը հիվանդները բարդություններ են ունենալու՝ ընդհուպ ինսուլտ ու երիկամային անբավարարություն:

Պարունակ Զելվեյանը, որը նաեւ Կանխարգելիչ սրտաբանության կենտրոնի տնօրենն է ու Սրտաբանության ինստիտուտի փոխտնօրենը, բացատրում է, որ հիպերտոնիան կամ զարկերակային գերճնշումը արյան ճնշման բարձրացումն է, եւ չափահասների մեջ 140\90-ից բարձր ճնշումն արդեն համարվում է զարկերակային գերճնշում: «Առաջին հայացքից թվում է թեթեւ մի բան, սակայն տեւական լինելու դեպքում հիպերտոնիան ախտահարում է մյուս օրգանները. առաջանում է սրտի իշեմիկ հիվանդություն, որը սրտի գերաճի հետեւանքն է, իսկ սրտի գերաճը հենց հիպերտոնիայի հետեւանքն է», ասում է սրտաբանը: Բարձր ճնշումը կարող է ախտահարել նաեւ երիկամները, արտան ու մյուս խոշոր անոթները, կարող է ախտահարել նաեւ աչքի հատակի անոթները: Ըստ բժշկի՝ զարկերակային գերճնշումը նաեւ ռիսկի գործոն է սրտանոթային հիվանդությունների առաջացման համար. «Իսկ Հայաստանում, առհասարակ, ամբողջ աշխարհում հիմա մահացությունների 50 տոկոսից ավելին սրտանոթային հիվանդություններից է»:

Պարունակ Զելվեյանն ասում է, որ զարկերակային գերճնշան առաջացման պատճառները տարբեր են. «Ճիշտ է, հիպերտոնիայի պատճառով կարող է առաջանալ երիկամային անբավարարություն, սակայն հնարավոր է, որ հիպերտոնիա առաջանա երիկամային անոթների ախտահարման կամ երիկամային բորբոքման պատճառով»: Երեւանի գլխավոր սրտաբանն ընդգծում է, որ բուժման ժամանակ բժիշկը պետք է հաշվի առնի ոչ միայն ճնշման թվերն, այլեւ թիրախ օրգանների ախտահարվածության աստիճանը. «Բացի դրանից՝ յուրաքանչյուր հիվանդ, կախված իր հիվանդության առանձնահատկություններից, առանձին մոտեցում ու բուժում է պահանջում, օրինակ՝ երիկամների ախտահարման պատճառով առաջացած գերճնշումը բուժման այլ ձեւ է պահանջում, իսկ սրտի գերաճ ունեցող հիպերտոնիկ հիվանդը՝ բուժման միանգամայն այլ ձեւ»:

Բոլոր դեպքերում էլ Պարունակ Զելվեյանը կարեւորում է, որ բուժումը կատարի գրագետ բժիշկը. «Եվ բժշկի գործը զուտ ճնշումն իջեցնելը չէ, ինչը շատերը կարող են անել, այլ գրագետ մասնագետը բուժում է ու կարգավորում հիվանդությունը»: Զրուցակիցս հիվանդներին խորհուրդ է տալիս հետագա բարդություններից խուսափելու համար ժամանակին դիմել բժշկի:

Ինչ վերաբերում է դեղորայքի ընտրությանն ու օգտագործմանը, որի մեջ հայտնի իսկական «պրոֆեսիոնալներ» ենք, եւ անկախ նրանից՝ խորհուրդ տվողն ինչպիսի կրթություն ունի, հիպերտոնիայով հիվանդին առնվազն 2-3 դեղ կարող է խորհուրդ տալ: Այս փաստը Պարունակ Զելվեյանին առանձնակի է զայրացնում. «Հարեւանի օգտագործած դեղը, որը նա խորհուրդ է տալիս հիվանդին, կարող է իջեցնել ճնշումը, բայց դա դեռ չի նշանակում, որ հիվանդի համար հակահիպերտենզիվ ճիշտ դեղամիջոցը հենց դա է: Ճնշում իջեցնող դեղամիջոցները շատ են, որոնց մեջ, սակայն, կան այնպիսի դեղեր, որոնք հակացուցված են երիկամային անբավարարություն կամ սրտի գերաճ ունեցողներին»: Բժիշկ Զելվեյանն անհանգստանում է, որ մեզանում նույնիսկ չարաշահում են այն դեղամիջոցները, որոնք նշված չեն որեւէ միջազգային ուղեցույցում: Դրանցից բժիշկն առանձնացնում է կլոֆելինն ու ադելֆանը, որոնց օգտագործումը խրոնիկական բուժման համար արդեն տասնյակ տարիներ է արգելված է:

Բժիշկ Զելվեյանն անդրադառնում է նաեւ ժողովրդական բժշկության մեթոդներին, ինչից հիպերտոնիկ հիվանդներն հաճախակի են օգտվում եւ հաճախ՝ անտեղի. «Մեզանում ժողովրդական բժշկություն ասելով հասկանում են, թե ով ուզենա՝ բուժում կնշանակի, սակայն ժողովրդական բժշկությունը դա չէ»: Ժողովրդական բժշկությունն, ըստ բժշկի, դարերի ընթացքում փորձված մեթոդների գրագետ օգտագործումն է, սակայն, ուսյալ բժիշկների խորհրդով. «Ե՛վ ավանդական, ե՛ւ ոչ ավանդական բժշկությունը գիտություններ են, որոնք պետք է օգտագործեն պրոֆեսիոնալները, ոչ թե դիլետանտները: Ժողովրդական բժշկությունը մեծ շտեմարան է, որի մեջ կան բուժման տարբեր նրբություններ ու արդյունավետ մոտեցումներ, իսկ դրանցով պետք է զբաղվեն պրոֆեսիոնալները: Սակայն այսօր բժշկական կրթություն չունեցող մարդիկ սկսել են զբաղվել բժշկությամբ, ինչը չի կարելի հանդուրժել»: Ժողովրդական բուժման մեթոդներից բժիշկը խոսեց ոտքերը տաք ջրի մեջ դնելուց, նրա խոսքով՝ ճնշման կտրուկ բարձրացումների ժամանակ որպես առաջին օգնություն՝ սա կիրառելի մեթոդ է, բայց դա էլ պետք է օգտագործել բժշկի խորհրդով, այլապես հնարավոր են անդառնալի կորուստներ: Օրինակ՝ ոտքերի թրոմբոզ ունեցող հիվանդներին ոտքերը տաք ջրի մեջ դնելը հակացուցված է:

Պարունակ Զելվեյանը տարբերակում է. «Կա առաջնային ու երկրորդային հիպերտոնիա»: Նրա խոսքով՝ երկրորդային հիպերտոնիան, որը կազմում է դեպքերի մոտավորապես 10 տոկոսը, առաջանում է օրգանիզմում առկա ախտահարումների պատճառով, իսկ 90 տոկոսից ավելի դեպքերում զարկերակային գերճնշման, այսինքն՝ առաջնային հիպերտոնիայի առաջացման պատճառները բժշկությանը դեռեւս հայտնի չեն: Սակայն կան մի շարք գործոններ, որոնք նպաստում են հիվանդության առաջացմանը: Ըստ բժիշկ Զելվեյանի՝ դրանք են ավելցուկային քաշը, ժառանգական նախատրամադրվածությունն ու ալկոհոլային խմիչքների չարաշահումը: Գերճնշումից խուսափելու համար բժիշկը խորհուրդ է տալիս բացառել ծխելը, ավելացնել ֆիզիկական ակտիվությունն ու սահմանափակել ածխաջրերի՝ քաղցր սննդի եւ կենդանական ճարպերի օգտագործումը՝ փոխարենն ավելացնելով բուսական յուղերի օգտագործումը: Իսկ եթե մարդն արդեն ունի զարկերակային գերճնշում, դարձյալ պետք է նվազեցնի օրգանիզմի քաշը, չծխի, չչարաշահի ալկոհոլն ու սննդակարգից բացառի կենդանական ճարպերը: Բժիշկ Զելվեյանն ընդգծում է, որ հիվանդները պետք է էջացնեն նաեւ աղի ու քաղցր սննդի օգտագործումը:

Գերճնշումը հավասարապես սպառնում է ե՛ւ կանանց, ե՛ւ տղամարդկանց: Հիպերտոնիկ հիվանդների գանգատներն հաճախ ավելանում են գարնանն ու աշնանը, քանի որ հիվանդությունը նաեւ դրսեւորվում է սեզոնային սրացումներով, ինչը պայմանավորված է մթնոլորտային ճնշման տատանումներով, որոնք ազդում են մարդու օրգանիզմի վրա:

Հարկավոր է քարոզել նաեւ առողջ կենսակերպ:

Նորություն չէ, որ հայերը բժշկի դիմում են այն ժամանակ, երբ դանակն արդեն ոսկորին է հասնում: Մեզանում նաեւ տարածված խնդիր է տարբեր հիվանդությունների ժամանակ ինքնաբուժում սկսելը: Ինչպես շատ հիվանդությունների, այնպես էլ հիպերտոնիայի դեպքում ինքնաբուժումը լավագույն տարբերակը չէ, եթե ոչ՝ վատագույնը: Պարունակ Զելվեյանը խորհուրդ է տալիս բուժումը սկսել բժշկի խորհրդով ու հսկողությամբ, ապա անդրադառնալով ախտանշաններին՝ նշում է, որ հիվանդները երբեմն ունենում են գլխացավեր, սրտխառնոց ու ծանրություն ծոծրակի շրջանում. «Բայց հնարավոր է՝ որեւէ ախտանիշ չլինի. մարդը չունենա գանգատներ, սակայն ճնշումը բարձր լինի, օրգանիզմն ախտահարվի, իսկ նա չիմանա այդ մասին»: Լավ կլինի՝ մարդիկ պարբերաբար չափեն զարկերակային ճնշումը, իսկ խնդիրների առկայության դեպքում սովորեն բժշկի դիմել:

Հարցին, իսկ ի՞նչ անել, որ մեզանում ձեւավորվի բժկի դիմելու մշակույթը, բժիշկ Զելվեյանը պատասխանում է, որ դրան պետք է նպաստեն նաեւ զանգվածային լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը, որն ամենամեծ լսարանն ունի եւ քարոզչական հզոր միջոց է: Զրուցակիցս հավելում է, որ առողջապահության ոլորտը մեր ԶԼՄ-ներով բավարար չափով չի լուսաբանվում, որովհետեւ չունենք առողջ ապրելակերպի պետական ծրագիր. «Եթե նման ծրագիր լինի, ապա քարոզչությունը կկազմի դրա կարեւոր բաղադրամասը»: Իսկ առողջ կենսակերպի քարոզչությունը նաեւ կնպաստի, որ մարդկանց մեջ բժշկի դիմելու կուլտուրա ձեւավորվի:

59-ամյա Վարդուհին պատմում է, որ 15 տարի արյան ճնշումը բարձրանում է: Վարդուհին մանրամասն նկարագրում է, թե բարձր ճնշման

բաքայքը, ինչը պայմանավորված է մթնոլորտային ճնշման տատանումներով, որոնք ազդում են մարդու օրգանիզմի վրա:

Հարկավոր է քարոզել նաեւ առողջ կենսակերպ:

Նորություն չէ, որ հայերը բժշկի դիմում են այն ժամանակ, երբ դանակն արդեն ոսկորին է հասնում: Մեզանում նաեւ տարածված խնդիր է տարբեր հիվանդությունների ժամանակ ինքնաբուժում սկսելը: Ինչպես շատ հիվանդությունների, այնպես էլ հիպերտոնիայի դեպքում ինքնաբուժումը լավագույն տարբերակը չէ, եթե ոչ՝ վատագույնը: Պարունակ Զելվեյանը խորհուրդ է տալիս բուժումը սկսել բժշկի խորհրդով ու հսկողությամբ, ապա անդրադառնալով ախտանշաններին՝ նշում է, որ հիվանդները երբեմն ունենում են գլխացավեր, սրտխառնոց ու ծանրություն ծոծրակի շրջանում. «Բայց հնարավոր է՝ որեւէ ախտանիշ չլինի. մարդը չունենա գանգատներ, սակայն ճնշումը բարձր լինի, օրգանիզմն ախտահարվի, իսկ նա չիմանա այդ մասին»: Լավ կլինի՝ մարդիկ պարբերաբար չափեն զարկերակային ճնշումը, իսկ խնդիրների առկայության դեպքում սովորեն բժշկի դիմել:

Հարցին, իսկ ի՞նչ անել, որ մեզանում ձեւավորվի բժկի դիմելու մշակույթը, բժիշկ Զելվեյանը պատասխանում է, որ դրան պետք է նպաստեն նաեւ զանգվածային լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը, որն ամենամեծ լսարանն ունի եւ քարոզչական հզոր միջոց է: Զրուցակիցս հավելում է, որ առողջապահության ոլորտը մեր ԶԼՄ-ներով բավարար չափով չի լուսաբանվում, որովհետեւ չունենք առողջ ապրելակերպի պետական ծրագիր. «Եթե նման ծրագիր լինի, ապա քարոզչությունը կկազմի դրա կարեւոր բաղադրամասը»: Իսկ առողջ կենսակերպի քարոզչությունը նաեւ կնպաստի, որ մարդկանց մեջ բժշկի դիմելու կուլտուրա ձեւավորվի:

59-ամյա Վարդուհին պատմում է, որ 15 տարի արյան ճնշումը բարձրանում է: Վարդուհին մանրամասն նկարագրում է, թե բարձր ճնշման պատճառով ինչպես է «գնացել էն աշխարհն ու հետ եկել»: Ուժեղ գլխացավեր, սրտխառնոց ու փսխում է ունեցել, երբեմն պառկել է տանն ու աշխատանքի գնալ չի կարողացել: Անգամ այսպիսի ոդիսականից հետո տիկին Վարդուհին բժշկի չի դիմել, ամեն անգամ ճնշումն իջեցրել է ծանոթների խորհուրդներով ու առաջարկած դեղերով: Խոստովանում է, որ բժշկի դիմել չի սիրում, իսկ սեփական առողջությանն, իսկապես, մահների արանքով է նայում. «Դե բնավորություն է, ի՞նչ անեմ»: Բարեբախտաբար ու պատահականորեն մի տարի առաջ տիկին Վարդուհին խորհրդակցում է մի բուժքույրի հետ եւ սկսում է խմել նրա առաջարկած դեղերը: «Մի տարի կլինի՝ համարյա ամեն օր դեղ եմ խմում ու ճնշումս չի բարձրանում», պատմում է Վարդուհին:

Մարդիկ հաճախ խուսափում են բժիշկներից նաեւ վճարումների պատճառով, բայց ի՞նչ արած՝ թանկ թե էժան, առողջության համար նույնպես պետք է վճարենք, իսկ թե ինչպիսի՞ բժշկի կհանդիպենք, դա արդեն այլ հարց է:

Պարունակ Զելվեյանը տեղեկացնում է, որ բիոքիմիական բոլոր հետազոտությունները, էխոսրտագրությունը, զարկերակային ճնշման 24-ժամյա սուդգումն ու բուժումը միասին Կանխարգելիչ սրտաբանության կենտրոնում արժեն առավելագույնը 20 հազար դրամ, իսկ սրտաբանի մոտ խորհրդավությունը՝ 6 հազար դրամ: «Մեր կլինիկայում խորհրդավության համար մի անգամ վճարելուց հետո 2 շաբաթ շարունակ կարող են այդ գումարով խորհրդավություն ստանալ», ավելացնում է բժիշկ Զելվեյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կոռուպցիայի աճի համար մեղավոր ենք նաեւ մենք

2010 թվականին կովկասյան հետաքննչական կենտրոնը հարցում է անցկացրել Հայաստանում կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ 1515 ձեռներեցների եւ 400 գործարարների շրջանում: 1996-ից 2010 թ. կարելի է նկատել կոռուպցիայի կայուն աճ:

1996, 2002 եւ 2008 թվականներին այն Հայաստանում կազմել է համապատասխանաբար 24, 23 եւ 35 տոկոս: Մյուս պետությունների հետ համեմատած մենք առաջատար դիրքերում ենք: Կոռուպցիոն երկրներում (Ռուսաստան, Ադրբեջան, Վրաստան) կոռուպցիան վերոնշյալ թվականներին կազմել է համապատասխանաբար 23%, 21%, 15% (ՌԴ), 11%, 16%, 14% (Ադրբեջան) եւ 5%, 6%, 51% (Վրաստան):

Իսկ այն հարցին, թե արդյոք համաձայն եք, որ կոռուպցիան Հայաստանում սովորական երեւույթ է դարձել, նույն ձեռներեցներն ու բիզնես ձեռնարկությունների տերերը պատասխանել են այսպես:

Ձեռնարկություններ.

Լիովին համամիտ եմ-42%

Այնքան էլ համամիտ չեմ-12%

Որոշ չափով համամիտ եմ-30%

Բոլորովին համամիտ չեմ-15%

Ձեռներեցներ՝

Լիովին համամիտ եմ-33%

Այնքան էլ համամիտ չեմ-19%

Որոշ չափով համամիտ եմ-26%

Բոլորովին համամիտ չեմ-19%

Այն մարդիկ, ովքեր կաշառք վերցնում ու տալիս են (կոռուպցիան սպառողներ), կազմում են 18,6%, վերցնում, բայց չեն տալիս (կեղծ պրագմատիկներ)՝-3,3%, չեն վերցնում, բայց տալիս են (կաշառատու)՝-35,9%, չեն վերցնում ու չեն տալիս (հակակոռուպցիոն ներուժ)-42,3%:

Ազգային վիճակագրական ծառայության սոցիալ-տնտեսական վիճակագրության վարչության պետ Նելլի Բաղասարյանից տեղեկացանք, որ 2011 թ. հունվար-փետրվար ամիսներին կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվը կազմել է 124 դեպք, ընդ որում այն աճողական է. հունվարին կազմել է 57, իսկ փետրվար ամսին 67 դեպք:

2008 թվականին կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվը կազմել է 392 դեպք. 2009-ին՝ 550, իսկ 2010-ին՝ 638: Այս ցուցանիշների աճը կապված է ճգնաժամի հետ:

Տիկին Բաղդասարյանը նաեւ նշեց, որ կոռուպցիոն դեպքերը ամենաշատը նկատվում են կրթական, դատական, բժշկական ոլորտներում:

Կոռուպցիային զոհ չդառնալու համար խորհուրդ է տրվում ձեռնպահ մնալ հանրային ծառայություններից օգտվելու դիմաց կաշառք տալուց, հրաժարվել պատասխանատուներին կամ նրանց ազգականներին լավություն անելուց՝ կապված ձեր աշխատանքի հետ, մասնակցել եւ աջակցել հակակոռուպցիոն կրթական արշավներին, մասնակցել հակակոռուպցիոն իրազեկման արշավներին, պատասխանատուների կոռումպացված վարքագծի մասին հայտնել իրավասու մարմիններին եւ հակակոռուպցիոն կենտրոններին կամ նրանց նկատմամբ հարուցել դատական գործ, չներգրավվել կոռուպցիոն գործընթացների մեջ:

ԿԱՐԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ռատանդուհի, ԵՊՀ

Պակիստանի ԱԳ նախարար. «Բեն Լադենի հավանական տեղը ԱՄՆ-ին հայտնել էինք 2009-ին»

Գրոհի եւ սպանության որոշ մանրամասնություններ

Պակիստանի իշխանությունները Ուսամա բեն Լադենի հավանական թաքստոցի տեղը ԱՄՆ-ին հայտնել էին դեռ 2009-ին: Այդ մասին հաղորդում է The Economic Times թերթը, վկայակոչելով Պակիստանի արտգործնախարար Սալման Բաշիրի հայտարարությունը:

Բաշիրը մայիսի 4-ին BBC-ին տված հարցազրույցում ասել էր, որ Պակիստանի միջգերատեսչական հետախուզությունը (ISI) երկու տարի առաջ է տեղեկացել Աբբոթաբադում «Ալ Ղաիդայի» առաջնորդի առանձնատան գոյության մասին: Բաշիրի խոսքերով, այն ժամանակ առանձնատունը համարվում էր բեն Լադենի հավանական բազմաթիվ թաքստոցներից մեկը:

Մինչդեռ Պակիստանի ԱԳՆ կայքում նշվում է, որ Աբբոթաբադում կասկածելի առանձնատան նկատմամբ հսկողություն է սահմանվել արդեն 2003 թվականին:

Բաշիրը դատապարտել է ԿՀՎ տնօրեն Լեոն Պանեттայի այն հայտարարությունը, թե ամերիկացիները բեն Լադենի ոչնչացման գործողության մասին չէին նախազգուշացրել պատշգամական Իսլամաբադին, որպեսզի վերջինս խոչընդոտներ չհարուցի: Նախարարն ասել է, որ ԱՄՆ-ը թերագնահատում է իր երկրի ավանդը միջազգային հակահաբեկչական պայքարում:

Ավելի վաղ Պակիստանի վարչապետ Յուսուֆ Ռզա Գիլանին հայտարարել էր, թե իր երկիրը տեղեկություն չի ունեցել Ուսամա բեն Լադենի գտնվելու վայրի մասին: Նույնպիսի պնդում էր արել Պակիստանի նախագահ Ասիֆ Ալի Զարդարին «Վաշինգտոն փոստ» թերթում:

Դիվանագիտական որոշ աղբյուրների համաձայն, բեն Լադենի թաքստոցին վերաբերող տեղեկությունները հասանելի են այն բանից հետո, երբ ԿՀՎ-ն գտել է «Ալ Ղաիդայի» առաջնորդի սուրհանդակ Աբու Ահմադին: Հատուկ ծառայությունները նրա ինքնությունը բացահայտել էին դեռ 2007-ին:

Ի դեպ, հայտնի են դարձել բեն Լադենի սպանության որոշ մանրամասնություններ, հրապարակվել են առանձնատանը եղած եւ սպանված մի քանի անձանց լուսանկարներ: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ գրոհի տեսագրությունները եւ Ուսամա բեն Լադենի անչափահաս դստեր վկայությունները հաստատում են, որ անձամբ Ուսամա բեն Լադենը եւ սենյակում նրա հետ եղած անձինք (այդ թվում՝ որդիներից մեկը) զինված չեն եղել եւ դիմադրություն ցույց չեն տվել, բայց սպանվել են: Ամերիկացիներին պետք չէր կենդանի բեն Լադեն, որի դատավարությունը կարող էր երեւան բերել երբեմնի համագործակցության մի շարք տհաճ գաղտնիքներ:

Բեռլուսկոնին իրավահաջորդ է ընտրել

Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին կառավարության ղեկավարի պաշտոնում իրավահաջորդ է ընտրել տնտեսության նախարար Ջուլիո Տրեմոնտիին: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Բեռլուսկոնին թեեւ չի բացառել իր մասնակցությունը 2013 թ. ընտրություններին, բայց ասել է, որ կարող է հրաժարվել պայքարից, եթե հայտնվեն ուրիշ ուժեղ թեկնածուներ: «Ստամպա» թերթին տված հարցազրույցում նա այդպիսի թեկնածու է համարել Տրեմոնտիին:

Անցյալում Բեռլուսկոնին հավանական իրավահաջորդ էր համարում ոչ թե Տրեմոնտիին, այլ արդարադատության նախարար Անջելինո Ալֆանոյին: Թե ինչու է վարչապետը նոր ընտրություն կատարել, լրատվամիջոցները չեն հաղորդում: Վարչապետն ընդգծել է, որ ինքը մտադիր չէ այսուհետեւ սեփական տեսակետը փոխել ապագա վարչապետի թեկնածության հարցում:

Բեռլուսկոնին կշարունակի ղեկավարել «Ազատության ժողովուրդ» կուսակցությունը: Նա նշել է, որ ուզում է վարչապետի պաշտոնը թողնել, որպեսզի առավել ակտիվորեն աչխատի իր աջ կենտրոնամետ կուսակցության հետ: Սիլվիո Բեռլուսկոնին Իտալիայի կառավարությունը ղեկավարել է 1994-1995, 2001-2006 թթ. եւ 2008-ից մինչեւ օրս:

Ռուսական ռազմօդանավերն առավել հաճախ են լրտեսում Ճապոնիային

Ճապոնիայի պաշտպանության նախարարության հաղորդման համաձայն, անցյալ տարի ճապոնական կործանիչները օտարերկրյա օդանավերի կալանման նպատակով ավելի հաճախ են օդ բարձրացել, քան երբեւիցե վերջին 15 տարում:

Ռազմական գերատեսչության տվյալներով, մարտի 30-ին ավարտված վերջին ֆինանսական տարում ճապոնական կործանիչների հարկադիր թռչիքների 2/3-ը կապված է եղել ռուսական օդանավերի մոտենալու հետ: Նախորդ տարվա համեմատությամբ նման թռիչքների թիվն ավելացել է 30 տոկոսով:

Կործանիչների 386 թռիչքներից 96-ը կապված է եղել չինական օդանավերի հետ, ինչը կրկնակի գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Եթե 2008-ին հյուսիսկորեական օդանավերի հետ կապված միջադեպ չէր եղել, ապա 2009-ին արձանագրվել է այդպիսի 12 միջադեպ:

Պաշտպանության նախարարությանը վկայակոչելով՝ NHK ազգային հեռուստաընկերությունը հաղորդում է, որ բերված ցուցանիշները ռուսական ռազմօդանավերով հավխվող հետախուզական տվյալների հարաճուն ծավալի վկայությունն են: Հեռուստաընկերությունը նշում է, որ Չինաստանը նույնպես ուժեղացնում է լրտեսական գործունեությունը, օգտագործելով առավել կատարյալ օդանավեր:

Վերջին 12 ամիսներին Ճապոնիան Ռուսաստանի եւ Չինաստանի հետ դիվանագիտական սուր վեճեր է ունեցել որոշ կղզիների պատկանելության հարցի շուրջը:

Նախարարությունը նաեւ հաղորդել է, որ չնայած լրտեսական գործողությունների ծավալմանը, ոչ մի օդանավ առանց թույլտվության չի մտել Ճապոնիայի օդային տարածք:

Քացվեց «հայերի պահապան հրեշտակի»՝ Լեփսիուսի հիշատակի տունը

1-ին էջից

«Պատմական պատասխանատվությունից ելնելով, դաշնային կառավարությունը Բրանդենբուրգ երկրամասի, երկրամասային մայրաքաղաք Պոտսդամի եւ Լեփսիուսի տան հովանավորների միության հետ համատեղ կյանքի է կոչել հետազոտության եւ հանդիպման վայր հանդիսացող հիշատակի հիշյալ վայրը, իր ելույթի սկզբում նշել է ԳԴՀ կառավարության ներկայացուցիչը: Այս տնից է 1916-ին գրաքննության սպառնալիքն արհամարհելով Լեփսիուսն ուղարկել իր «Ձեկույցը»՝ սահմռկեցուցիչ փաստերի լուսաբանումը համայն աշխարհի ուշադրությանը ներկայացնելով: Տունը հիշեցնելու է Լեփսիուսի օրինակելի վարքի մասին, նաեւ մի վայր է, ուր պիտի Հայաստանի մշակության ժառանգությունը ուսումնասիրվի, ինչպես նաեւ թուրքերի եւ հայերի միջեւ երկխոսությունը կարելի դարձնի», նկատել է տվել բանախոսը: Նա հիշատակել է նաեւ Գերմանիայի մեղսակցությունը՝ վկայակոչելով 2005-ին Բունդեսթագի Հայոց կոտորածների վերաբերյալ բանաձեւում ձեւակերպվածը: Պետնախարարն ակնարկել է՝ «Գերմանիան ու Թուրքիան տասնամյակներ շարունակ լավ հարաբերություններ են պահպանում: Ուստի երկու երկրների լավ եւ բարեկամական հարաբերությունները թույլ են տալիս ու պարտադրում ասել նաեւ ճշմարտությունը: Պատմության անկեղծ վերանայումը շատ կարեւոր է եւ հետության հիմք է ստեղծում,- իր ելույթում նշել է Բերնդ Նոյմանը՝ այնուհետեւ շարունակելով,- «մենք՝ գերմանացիներս ուզում ենք, որ Լեփսիուսի տունը իր ներդրումն ունենա թուրքերի եւ հայերի՝ անցյալի խրամատների վրայով դեպի հաշտեցման եւ ըմբռնման ուղին փնտրելու ճանապարհին»:

Իր հերթին Բեռլինում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանը նախ Հայաստանի կառավարության եւ ժողովրդի անունից բարձր գնահատանք եւ անկեղծ հիացմունք է արտահայտել ձեռնարկի առիթով, այնուհետեւ շեշտել երջանկահիշատակ Հերման Գոլցի դերը Լեփսիուսի հիշատակի տան կայացման գործում:

«Այսօր հրապարակությունը կորցրել է 20-րդ դարի առաջին տասնամյակներին վիճարկվող «Հայոց ցեղասպանություն եղե՞լ է, թե՞ ոչ» հարցը: Հայոց ցեղասպանությունը փաստ է եւ սակարկելի չէ», ասել է դեսպան Մարտիրոսյանը՝ մատնանշելով, թե Լեփսիուսի հաստատությունը կարող է ճնշության նյութ դարձնել Օսմանյան կայսրության հայերի բնաջնջման նախապատմության, իրականացման կառուցվածքին, ոչնչացման գաղափարական, սոցիալական եւ սոցիալ հոգեբանական տեսակետները: Անկասկած, միջազգային արդի հարաբերություններում հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների կարգավորումը կարեւոր հարց է դարձել, ասել է Արմեն Մարտիրոսյանը՝ շեշտելով՝ հավատում եմ, որ Լեփսիուսի հիշատակի տունը որպես գերմանական հաստատություն կարող է եզակի դեր խաղալ այդ ուղղությամբ. թուրք հանրության առաջադեմ ներկայացուցիչների եւ մտավորականների հետ գործնական հարաբերությունների հիմնումը կարող է հաջողությամբ լրացնել պատշգամական Բեռլինի ջանքերը՝ նպատակ հետապնդելով Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման: Բացի Հայոց ցեղասպանության խնդրից՝ Լեփսիուսի ուշադրության առանցքում եղել են նաեւ գերմանահայկական հարաբերությունները, նա հիմնադրել եւ նախագահել է նմանատիպ անվանմամբ ընկերակցությունը, իսկ նրա տեղակալ Ջեյմս Գրիինֆիլդը 1918-1920 թվականներին եղել է Հայաստանի անկախ հանրապետության առաջին դիվանագետ բանագնացը: Միայն միացյալ ջանքերի արդյունքում է հնարավոր իրագործելի նախագծերը կյանքի կոչել, ասել է Բեռլինում ՀՀ դեսպանը՝ կոչ ուղղելով Գերմանիայում եւ Հայաստանում բնակվող իր հայրենակիցներին՝ մտավոր եւ կազմակերպչական հետեւողական աջակցություն ցույց տալ Պոտսդամի նորաբաց հայանպաստ հաստատությանը:

Հնչել են նաեւ այլ ելույթներ, որոնց չենք անդրադառնա՝ տեղի սղության պատճառով: Փոխարենը մեր հրապարակումն ամբողջացնենք որվա առիթով տեղական լրատվամիջոցներում տեղ գտած մեծաքանակ հարցազրույցներից ու հոդվածներից ընտրած մեր լրահաղորդ:

Հիշատակի տունը բացեց իր դռները՝ ի հեճուկս թուրքական խոչընդոտների, բայց «հաշտեցումը դեռ սպասել կտա», գրում է գերմանական «Մերկիբե ալգեմայնե»՝ տեղեկացնելով նաեւ, թե 2012-ին կառույցը ֆինանսական ներդրումների կարիք ունի: Նույն թերթում տպագրվել է նաեւ Լեփսիուսի թոռան՝ իրավաբան Մանֆրեդ Աշկեի հետ զրույցը: Լեփսիուսը երկու ամուսնություններից 12 զավակ է ունեցել, երկու զավակները մանուկ հասակում են մահացել: Դուստրերից մեկը՝ 101-ամյա Անգելա Վաքֆիլդը ապրում է Սիդնեյում եւ բացման առիթով իր շնորհավորանքն է ուղարկել: Աշկեի մայրը՝ Վիոլան, որ զավակներից նախավերջինն է եղել, ծնվել է այդ տանը, 1907-ին, մահկանացուն կնքել է 2005-ին: Լեփսիուսի թոռը պատմում է մոր հիշողությունները, թե իրենց հաճախ հայեր էին այցելում: Մանֆրեդ Աշկեն առաջին անգամ 13 տարեկանում է գլխաչված հայերի լուսանկարներ տեսել, այնքան է ազդվել, որ տարիներ անց է միայն կարողացել խոսել մոր հետ դրանց մասին, ինչպես նաեւ իրազեկ է դարձել պապի դերակատարմանը՝ ցեղասպանությանը ընդդիմանալու եւ 1916-ին ձերբակալման վախից որոշ ժամանակով Հոլանդիա արտագաղթի մասին:

«Լեփսիուսի տունը հետամուտ է Թուրքիայի, Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ հարաբերությունների բարելավման նպատակին: Դա ինչպե՞ս պիտի հաջողվի, եթե Թուրքիայի դեսպանը նույնիսկ բացման առիթով տված MAZ-ի թղթակցի հարցմանը հրաժարվել է պատասխանել: Համագործակցության պատրաստակամությունը ուրիշ տեսք ունի», թերթի հարցին Աշկեն պատասխանում է՝ «պատշգամական թուրքական քաղաքականությունը դժվարություն ունի պատմության հանդեպ: Սա դրա նշանն է: Մեր հույսը թուրքական հասարակության տեսանելի զարգացումներն են, շատերն են ուզում իմանալ, թե հայերի հետ ինչ է պատահել»:

«Դոյչլանդռադիոն» երկու տարբեր հաղորդումով է անդրադառնում իրադարձությանը՝ զրուցելով նախ Լեփսիուսի հիշատակի տան հովանավորների միության նախագահ Հանս Ուլրիխ Շուլցի հետ: Լրագրողի այն հարցին, թե հիշատակի տան հանդեպ թուրքական լարվածությունը հանդարտե՞լ է, սպառնալիքները սպառվե՞լ են, Շուլցը ծանուցում է, թե իրադրությունը փոխվել է, իրենք եղել են Սամբուլում, հանդիպել ու զրուցել առաջադեմ թուրք մտավորականների հետ եւ շարունակելու են այս ուղղությամբ աշխատել: Հիշյալ ռադիոյի թողարկած երկրորդ հաղորդման բովանդակությունը ամփոփված է վերնագրում՝ «Ուրացված ցեղասպանություն»: «Մի առանձնատուն՝ հայերի պահապան հրեշտակի համար» վերնագիրն է ընտրել «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը»: Պոտսդամի առանձնատունը, որտեղից գրեթե 20 տարի շարունակ նա իր հրապարակային պայքարն էր մղում հանուն հայ վերապրողների, մայիսի 2-ից հետազոտության եւ հանդիպման վայր է դառնում թուրքերի եւ հայերի համար, գրում է թերթը: «Ֆաց»-ի հեղինակն անդրադառնում է նաեւ երիտթուրքերի ախտրավայր Բեռլինին, որ միեւնույն ժամանակ այն քաղաքն է, որտեղ դատարանը արդարացրեց Թալեաթ փաշային սպանած Սողոմոն Թեհլերյանին: «Այսօր թուրքական իշխող յուրահանչյուր կառավարություն, ի դեմս նաեւ ներկա վարչապետ Էրդողանի, հրաժարվում է հայոց դեմ իրականացված ոճիրը ՄԱԿ-ի 1948-ի կոնվենցիայից բխող ցեղասպանություն բառեզրով բնութագրելուց: Թեպետ դրա նախաձեռնող Լեմկինը բառեզրը հենց թուրքական՝ հայերի բնաջնջման քաղաքականությունը կնատի ունենալով էր շրջանառել: Այս պատմություններին կարող է իրազեկ դառնալ յուրահանչյուրը, ով դիտում է Լեփսիուսի տուն-թանգարանի ցուցադրությունները՝ առաջին հերթին Արմին Վեգների վավերագրությունների վերատպությունները», գրում է «Ֆաց»-ը:

Հերման Գոլցի մահից հետո Լեփսիուսի հիշատակի տան գիտական ղեկավարի թափուր տեղի համար մրցույթ էր հայտարարվել: Հաստատության հովանավորների միության նախագահության անդամ **պրոֆ. Արմենուհի Դրոսս-Աբգարյանը** մեր հեռախոսազրույցում տեղեկացնում է, թե մրցույթին մասնակցել են նաեւ երկու հայեր՝ Տիգրան Սարուխանյանը (Երեւան) եւ Արթուր Մանուկյանը (Գյոթինգեն): Ամենայն հավանականությամբ «Լեփսիուս» հաստատության ղեկավարի պատշգամը կստանձնի 1948-ին ծնված գերմանացի լրագրող, ֆիլմերի հեղինակ Ռոլֆ Հոսֆելդը, որ առավել ծանոթ է իր «Նեմեսիս գործողություն» գրքով: Տիկին Դրոսս-Աբգարյանը հույս է փայփայում, թե ապագա ղեկավարը ավանդույթների շարունակող կլինի՝ կստեղծի հարաբերությունները գերմանա-հայկական միության հետ, կակտիվացնի համագործակցությունը հայկական կազմակերպությունների հետ:

ՀԱԿԱԲԱԿԱՆ ՀՐԱՇԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Նվիրատվություններ Ժնեւի գրքի ցուցահանդեսի հայկական տաղավարի համար

Պարզվում է, որ Ժնեւի գրքի միջազգային ցուցահանդեսի հայկական տաղավարի համար, որի բացմանը ներկա գտնվեց նաեւ ՀՀ նախագահը՝ մշակույթի եւ սփյուռքի նախարարների ուղեկցությամբ, նյութական նվիրատվություններով կարեւորագույն մասնակցություն են ունեցել ՀԲԸՄիությունը եւ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժանմունքը, ինչպես նաեւ Թոփալյան հիմնարկությունը եւ ողջ գաղթօջախը՝ Վահե Կաբրաճի գլխավորությամբ: Փաստ, որին չանդրադարձան ՀՀ նախագահին ուղեկցող մեր գործընկեր լրագրողները: Առավել տարօրինակ էր, որ այդ նվիրատվություններին չանդրադարձան նաեւ հրապարակված պաշտոնական հաղորդագրությունները:

Ըստ «Ազգ»-ի ստացած տեղեկությունների, տպավորիչ է եղել Գ. Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժանմունքի մասնակցությունը ոչ միայն հայկական տաղավարի վարձակալման, այլեւ ցուցադրվող գրքերի ապահովման տեսակետից: 180 անուն մեծարժեք գրքեր, վերջին 5 տարիներին նույն հիմնարկության միջոցով հրատարակված Հայաստանում, Անթիլիասի կաթողիկոսարանում թե այլուր, ներկայացվել են այցելուներին: Ցուցահանդեսից հետո այդ գրքերը նվիրվելու են Ժնեւի Հայ կենտրոնի գրադարանին, որը կրում է պոլսահայ լեզվաբան-բանասեր, նոր թուրքերենի հիմնադիրներից Հակոբ Մարթայանի (Դիլաչար) անունը:

Օրական 1000-2000 այցելու ընդունող տաղավարում ներկայացված հայկական հնատիպ գրքերը տրամադրված են եղել Փարիզի Նուբարյան մատենադարանի կողմից, իսկ հին գրքերի հավաքածուն՝ Ժնեւի նշանավոր «Թափի դ' Օրիան» գրքավաճառատան տեր, ռամկավար գործիչ Հակոբ Ավագյանը:

Տպավորիչ է եղել նաեւ հայաստանյան հրատարակչատուն-տպարանների հրատարակած գեղարվեստական ալբոմները: Պոլսահայ հրատարակչատներից իր կարեւոր մասնակցությունն է ունեցել «Արաս» հրատարակչատունը:

Սփյուռքով հպարտանալ՝ նշանակում է գնահատել սփյուռքի դերն ու դերակատարությունը մեր ժողովրդի կյանքում: Հետեւաբար արժեր այս առթիվ հրապարակավ շնորհակալություն հայտնել սփյուռքահայ կազմակերպություններին եւ անհատներին:

Տ. Ա.

Յարութիւն Ռ. Գէորգեանի դասախօսութեանց շարք Կանադայի եւ ԱՄՆ-ի մէջ

Մայիս ամսուան ընթացքին Կանադայի եւ ԱՄՆ-ի մէջ Յարութիւն Ռէյմոնդ Գէորգեան, պատմաբան, հեղինակ, Փարիզի համալսարանի Institute Francais de Gopolitique-ի դասախօս, եւ ՀԲԸՄ-ի Նուբարեան գրադարանի տնօրէն, հրաւիրուած է դասախօսութեանց շարք մը տալու՝ նուիրուած իր նոր գիրքին՝ The Armenian Genocide: A Complete History (Հայկական ցեղասպանութիւնը. համաշարհական պատմութիւն մը), որ վերջերս Ֆրանսերէնէ անգլերէնի թարգմանուած է եւ հրատարակուած I. B. Tauris-ի կողմէ: Այս հազար էջնոց սպառիչ ուսումնասիրութեամբ, հեղինակը վաւերագրական պատումով կը ներկայացնէ Հայկական ցեղասպանութեան ծագումը, դէպքերը եւ հետեւանքները: Առաւելաբար նկատի կ՚առնէ այն դերը, որ Հայկական ցեղասպանութիւնը կատարած է թուրք ազգայնութեան եւ թուրք ինքնութեան կազմաւորման մէջ, նաեւ լոյս կը սփռէ ուժի, իշխանութեան եւ պետական բռնութեան գաղափարաբանութեանց վրայ: Հեղինակը նոյնպէս կը քննէ հայերուն դէմ գործուած բռնութեանց հետեւանքները, տեղահանութեանց հետ առնչուած խնդիրներն ու երեւոյթները եւ ոճրագործները դատի տալու փորձերը:



Պրն. Գէորգեանի շրջագայութիւնը սկսաւ մայիս 3ին, Տորոնտոյի ՀԲԸՄ-ի կեդրոնէն ներս, տեղական մասնաճիւղի կազմակերպութեամբ, եւ պիտի շարունակուի մայիս 4-6 Մոնթրէալ, ՀԲԸՄ-ի Ալեֆ Մանուկեան կեդրոնին մէջ, ուր երեք դասախօսութիւններ պիտի տայ հեղինակը: Առաջինը՝ «Հայ գաղթականները Մերձաւոր Արեւելքի մէջ 1920ական թուականներուն», կազմակերպուած է ՀԲԸՄ Մանուէլ Քէօսէեան հայագիտական ծրագրի կողմէ, իսկ երկրորդը՝ «Հարաւային Կովկասի տարածաշրջանի խաղաղական իրավիճակը», ՀԲԸՄ Մոնթրէալի Երիտասարդ արհեստավարժներու կողմէ կազմակերպուած է: Իսկ երրորդ դասախօսութիւնը պիտի նուիրուի Գէորգեանի նոր գիրքին:

Պրն. Գէորգեան մայիսի 9-ին իր գիրքը պիտի ներկայացնէ Կալիֆորնիոյ Սիլիքոն Հովտի մասնաճիւղին, իսկ յաջորդ իրիկունը՝ ՀԲԸՄ-ի Փասադինայի կեդրոնը, ՀԲԸՄ-ի Գլենդէյլ-Փասադինայի մասնաճիւղի հրաւէրով: Յաջորդ դասախօսութիւնը տեղի պիտի ունենայ Դիթրոյթ, «Յակոբեան» ցուցասրահ, մայիս 12ին, ՀԲԸՄ-ի տեղական մասնաճիւղի, ՀԲԸՄ Ալեֆ եւ Մարի Մանուկեան վարժարանի, Թէֆէեան մշակութային միութեան, Վարդանանց ասպետներու եւ Դիթրոյթ Արմինիա Ֆեսթ յանձնախումբի կազմակերպութեամբ: Գէորգեանի վերջին ելոյթը տեղի պիտի ունենայ մայիս 13ին, ՀԲԸՄ-ի Նիւ Եորքի կեդրոնական գրասենեակը:

Թղթակից

Նոր հրատարակություններ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել հետեւյալ աշխատությունները՝ Արշակ Մադոյանի «Գէորգ Ջ Չորէքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց», Իլարիոն արքեպիսկոպոս Տրոիցկու «Քրիստոնեություն չկա առանց Եկեղեցու» թարգմանությամբ Տ. Վահրամ քահանա Մելիքյանի, Էմմանուել քահանա Նազարյանի «Պարզ քարոզներ» գրքերը, ինչպես նաեւ վերահրատարակել է Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանի «Հայոց եկեղեցու պատմության» Ա մասը:

Արշակ Մադոյանի «Գէորգ Ջ Չորէքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց» գիրքը նվիրված է լուսահոգի Գեւորգ հայրապետի կյանքին ու գործունեությանը:

Իլարիոն արք. Տրոիցկու «Քրիստոնեություն չկա առանց եկեղեցու» աշխատությունը գրվել է 20-րդ դարի սկզբին եւ ցայսօր իր պատգամով այժմեական է նաեւ հայ հասարակության համար, որի հիմքում ընկած է այն կարեւոր գաղափարը, թե քրիստոնեությունն ու եկեղեցին չեն կարող անջատաբար դիտվել, այլ միայն փոխկապակցության մեջ՝ աղոթական ու ներեկեղեցական կյանքով:

Ուսուցիչ, գրականագետ, քարոզիչ Էմմանուել քահանայի «Պարզ քարոզներ» քառահատոր ժողովածուն, նախատեսված լինելով ընթերցողի լայն շրջանակի համար, այսօր էլ պահպանում է իր կենդանի ուժն ու ներգործությունը:

Նշանավոր հայագետ Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանի «Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն» ուսումնական ձեռնարկի սույն Ա մասն ընդգրկում է քրիստոնության ծագումից մինչեւ Ջ դարի կեսերն ընկած ժամանակաշրջանի՝ Հայոց եկեղեցու եւ նրա հետ աղերսվող քաղաքական պատմության ամփոփ նկարագիրը:

Բոլոր այս գրքերը հրատարակվել են մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:

«Քեմը՝ բացահայտման տարածք»

Ավելի լայն հնարավորություններ՝ երիտասարդ արվեստագետներին

Կոմիտասի անվան երաժշտական տան շաբաթ օրվա երեկոն անցավ Անի Այդինյանի դաշնամուրային երաժշտության մենահամերգով: Չնայած չդադարող անձրեւին՝ դահլիճը լեփ-լեցուն էր, եւ հաճելի էր տեսնել շնորհալի երիտասարդ դաշնակահարի հանդեպ հանդիսականի վերաբերմունքի ջերմությունը եւ այն ներքին փոխըմբռնումը, որ գոյացավ ու զարգացավ համերգի ընթացքին: Համերգային ծրագրում հնչեցին Բախի «Խորալային պրելյուդներ», Բրամսի «Վարիացիաներ Պագանինիի թեմայով», Մ. Ռավելի «Թախծոտ թռչունները», «Ջրի խաղը», Ռախմանինովի «Պրելյուդ», Պրոկոֆեւի Սոնատ թիվ 7 ստեղծագործությունները:

Նկատելի էր երիտասարդ դաշնակահարուհու պատասխանատու վերաբերմունքը դահլիճին ու բեմին, համակրելի՝ նրա բեմական զուսպ արտաքինը, չնայած հուզմունքին՝ վստահ էր պահվածքը: «Համերգից հուզված եմ եւ ցնցված: Տարիներ շարունակ հետեւում եմ նրա զարգացումներին եւ կարող եմ վկայել կատարողական արվեստի մեծ աճը: Ընտրել էր դժվարագույն ծրագիր եւ պատվով հաղթահարեց: Ինձ հիացրեց Պրոկոֆեւի Սոնատի կատարումը. իսկապես դաշնակահարուհի է, ձեւավորված պրոֆեսիոնալ արտիստ: Համերգային ծրագիրը մատուցվեց ամբողջական, դաշնակահարի մեկնաբանությունը համահունչ էր կոմպոզիտորական մտածողությանն ու արտահայտություններին», սա կոմպոզիտոր Ռուբեն Ալթունյանի կարծիքն է: «Զուսպ, բայց առինքնող արտիստականություն, ստեղծագործությունը ամբողջությամբ եւ ամենանուրբ երանգներով բացահայտելու կարողություն», այսպիսին էր ճարտարապետ Սաշուր Քալաշյանի տպավորությունը: Սարգիս Գուրզադյանի մտահոգությունը տաղանդավոր երիտասարդ մարդկանց հուսահատության չմատնելն ու չհեռացնելն է երկրից, տեսնել, գնահատել կարողություններն ու ունակությունները, աջակցել նրանց:

Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինն ավարտելով (դասատու՝ Ելենա Սահակյան)՝ Անի Այդինյանը ընդունվել է Կոմիտասի անվ. կոնսերվատորիա, սովորել պրոֆեսոր Ռոզա Թանդիլյանի դասարանում եւ ավարտել գեղազանցության դիպլոմով: Դպրոցական տարիներին մասնակցել է հանրապետական տարբեր մրցույթների, 1996-ին «Ջարթոնք» մրցույթի 2-րդ մրցանակին արժանացել: Կոնսերվատորիական ուսման 3-րդ տարին առանձնակի հաջող էր, երբ իրեն հնարավորություն ընձեռվեց մասնակցելու Իսպանիայի Սան-Սեբաստիան քաղաքի երիտասարդ դաշնակահարների 2005-ի միջազգային մրցույթին: Որի համար հարկավոր եղավ հաղթահարել որոշ դժվարություններ, ի մասնավորի Հայաստանում Իտալիայի դեսպանության հարուցած խոչընդոտները եւ մեկնելու արտոնություն ստանալ հաջողվեց Մոսկվայում Իսպանիայի դեսպանության միջոցով միայն: Իր երկրի միակ ներկայացուցիչը լինելու հանգամանքը պարտավորեցնող էր, միաժամանակ ներշնչող: Անին հանդես եկավ Պրոկոֆեւի թիվ 7 Սոնատի կատարմամբ եւ համարվեց լավագույնը, շահեց 1-ին մրցանակը: Մրցույթին եւ հաղթողներին անդրադարձավ իսպանական մամուլը: Այս հաջողությանը հետեւեցին Սան-Սեբաստիան եւ Սաբադելլ քաղաքներից մենահամերգների հրավերներ:

2007-ին Անին մեկնեց Ֆրանսիա՝ մասնակցելու Լիոնի ազգային կոնսերվատորիայի կատարելագործման դասընթացներին, մեկ տարի սովորեց Մարի-Պոլ Աբուլկերի դասարանում: Մասնակցեց Դեբյուսիի անվ. նշանավոր կվարտետի անդամ Վինսենթ Դեպրեսկի վարպետության դասընթացներին, նաեւ կամերային երաժշտության փառատոների, մենահամերգներ ունեցավ:

Բեմական գործունեության երեւանյան շրջանը տարբեր դժվարություններ է հարուցում: «Իմ բախտը բերել է, երբ կողքիս ունեմ ինձ հավատացող, աջակցող մարդիկ, նախեւառաջ՝ ընտանիքիս հոգատարությունը», ասում է Անին, խոստովանում, որ երաժշտության հանդեպ մանկուց ունեցած հետաքրքրությունների ու հակումների զարգացմանը նպաստել է հայրը՝ ճարտարապետ Ռոբերտ Այդինյանը՝ ոչ միայն երաժշտասեր, այլեւ հատկապես հայ ազգային եւ հոգեւոր, նաեւ դասական երաժշտության գիտակ: Երախտագիտությամբ է խոսում ուսուցիչների՝ Ելենա Սահակյանի եւ Ռոզա Թանդիլյանի մասին. «Ռոզա Թանդիլյանը , նա Առնո Բաբաջանյանի ուսանողուհին է եղել, մեզ էր փոխանցում Բաբաջանյանական դաշնամուրային դպրոցի արվեստի գաղտնիքները: Նա ոչ միայն բարձրակարգ մասնագետ է, այլեւ նվիրյալ ուսուցիչ, մեծ մարդ: Ես հետեւում եմ իր խորհուրդներին եւ նա իմ կողքին է միշտ: Հաջողություններիս համար նախեւառաջ նրան եմ պարտական: Հաճախ է ասում՝ նվագիր, ինչպես ազատ արտիստ: Եվ ես հասկանում եմ, որ իմացության այն հենքի վրա, որ ստացել եմ իրենից, ներքին զգացմունքային ազատություն զարգացնելն անհրաժեշտ է»:

«Բեմը բացահայտվելու տարածք է: Իմ այս համերգը համարժեք էր վեցամսյա անհատական պարապմունքներիս: Լիոնից հետո ես ավելի շատ սկսեցի աշխատել. կատարելագործվելու դեռ շատ ճանապարհ կա անցնելու: Եվ լավ է, որ ես տեսնում եմ դա»:

Մոտեցումների, համոզմունքների ինքնատիպության մի փորձ էր շաբաթ օրվա համերգային ծրագիրը. «Զգում էի հանդիսականին շատ մոտ, որ հազվադեպ է պատահում: Հնարավորինս աշխատում էի անկեղծ լինել նրանց հետ. չէ՞ որ նրանց համար էի նվագում: Երբ բեմ դուրս եկա, զգացի դահլիճի դրական էներգիան եւ հասկացա, որ պետք է ավելին փոխհատուցել: Երբ այդքան մարդ քեզ ունկնդրելու է եկել, ուրեմն սպասելիք ունի: Ի վերջո, ոչ մեկին ոչինչ չես ապացուցում եւ զարմացնելու համար չէ արվեստը, այլ՝ մարդկանց օգնելու»:

...Համերգի ավարտին ծաղիկների միջից ժպտացող դաշնակահարի հուզված հայացքը փնտրում էր ուսուցչին: Ռոզա Թանդիլյանը այսպես գնահատեց իր սանի ելույթը. «Ակնհայտ է երաժշտական տարբեր ոճերի զգացողությունը եւ տեխնիկական հնարքների տիրապետումը, ինչը ցայտուն դրսեւորվեց Պրոկոֆեւի Սոնատի կատարման ընթացքում: Արտիստիկ է, անկաշկանդ եւ ունի բոլոր հնարավորությունները լավագույն բեմերում եւ տարբեր նվագախմբերի հետ հանդես գալու»: Այս խոսքերը համահունչ են Գրիգոր Գուրզադյանի կանխատեսմանն արտահայտած վերջին ժողովածուում. «Կուսանաց վանքի այդ սքանչելի դէխուհու ապագան աշխարհի բեմահարթակներն են լինելու...»: Տարիներ առաջ ակադեմիկոսն իր գործերից մեկը՝ «Անի... Կուսանաց վանք...» էսսեն, նվիրել էր երիտասարդ դաշնակահարուհուն:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Եզրափակիչում կրկին «Բարսելոնն» ու «Մանչեսթր Յունայթեդը»

2009-ին հաջողությունն ուղեկցել էր «Բարսելոնին»

«Մանչեսթր Յունայթեդի» ֆուտբոլիստները սեփական հարկի տակ էլ վստահ հաղթանակ տոնելով «Շալկե-04-ի» նկատմամբ, արժանիորեն նվաճեցին չեմպիոնների լիգայի եզրափակիչի ուղեգիրը եւ իրավունք ստացան մայիսի 28-ին Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում «Բարսելոնի» հետ վիճարկելու պատվավոր մրցանակը:

Թեեւ «Մանչեսթր Յունայթեդը» պատասխան խաղում խաղադաշտ էր դուրս եկել ոչ հիմնական կազմով (մասնավորապես բացակայում էին առաջին խաղում գոլերի հեղինակներ դարձած Ռայան Գիգզն ու Ուեյն Ռունին), սակայն սեփական հարկի տակ 4-1 հաշվով ջախջախեց մրցակցին: Արդեն առաջին խաղակեսում Ալեխ Ֆերգյուսոնի սաները խաղը շահում էին 2-1 հաշվով: Հյուրերին անհրաժեշտ էր 2-րդ խաղակեսում 3 անպատասխան գնդակ խփել: Սակայն դա նրանց ուժերից վեր էր: Փոխարենը դաշտի տերերից Անդերսոնը 2 անգամ գրավեց մրցակցի դարպասը՝ ապահովելով իր թիմի խոշոր հաշվով հաղթանակը:

Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Ալեխ Ֆերգյուսոն («Մանչեսթր Յունայթեդ»)- Երբեմն հարկավոր է վստահել ֆուտբոլիստներին: Ինձ համար դժվար էր որոշել թիմի կազմը: Սակայն «Արսենալի» հետ հանդիպման արդյունքը սիրեց դիմել այդպիսի քայլի: Եթե կիսաեզրափակիչի առաջին հանդիպումը մեզ համար այդքան հաջող չդասավորվեր, ոչ մի դեպքում չէի համարձակվի մեկնարկային կազմում միանգամից 9 փոփոխություն կատարել: Այնպես որ կիրակի օրը ֆուտբոլիստներից շատերը թարմ ուժերով խաղադաշտ դուրս կգան:

Նախորդ անգամ «Բարսելոնի» հետ մրցակցությունում մենք էինք հաղթողի հիմնական հավակնորդը: Թերեւս մենք մի փոքր ավելի փորձառու ենք, սակայն այսօր «Բարսելոնը» վերելք է ապրում: Այնպես որ եզրափակիչը մեծ հետաքրքրությամբ է սպասվում: Ճիշտ է, «Բարսելոնն» ընթացիկ մրցաշրջանում հիանալի է խաղում Եվրոպայում, բարձակարգ ու հզոր թիմ է, սակայն դա պատճառ չէ, որպեսզի մենք վախից քարանք: Բոլորին է հայտնի, թե ինչպես է խաղում «Բարսելոնը»: Մեր խնդիրն է մտածել, թե ինչպես պայքարել այդ թիմի դեմ: Ջեմ կասկածում, որ եզրափակիչում հիանալի խաղ կստացվի:

Ռալֆ Ռանգնիկ («Շալկե-04»)- Շնորհավորում եմ «Մանչեսթր Յունայթեդին», որն արժանի հաղթանակ տոնեց, քանի որ երկու խաղերում էլ ուժեղ էր: Այսօրվա խաղի առաջին 20 րոպեներին ավելի հաջող խաղացինք, քան սեփական հարկի տակ: Սակայն հենց գոլ բաց թողեցինք, մեր խնդիրն էլ ավելի դժվարացավ: Մրցակցի 2-րդ կազմում էլ բարձրակարգ ֆուտբոլիստներ կան հանձինս Դիմիտար Բերբատովի, Անդերսոնի եւ երկու կենտրոնական պաշտպանների: Սա վկայում է «Մանչեսթր Յունայթեդի» բարձր կարգի մասին: Վստահ եմ, որ բունդեսլիգայի շատ թիմեր կերազեին անգլիական ակումբի նման կազմ ունենալ: Մենք այսօր մեր հնարավորությունների սահմանում խաղացինք:

Շատ դժվար է գուշակել եզրափակիչ մրցախաղի ելքը: Այսօր «Բարսելոնը» եվրոպական ֆուտբոլի առաջատարն է: Մյուս կողմից խաղը կայանալու է «Ուեմբլիում», իսկ դա գուցե որոշ առավելություն տա «Մանչեսթր Յունայթեդին»:

Եվ այսպես, 2 տարի անց չեմպիոնների լիգայի եզրափակիչում կրկին կհանդիպեն իսպանական «Բարսելոնն» ու անգլիական «Մանչեսթր Յունայթեդը»: 2009-ին Հռոմի «Օլիմպիկո» մարզադաշտում «Բարսելոնը» Խոսեպ Գվարդիոլայի գլխավորությամբ նվաճել էր չեմպիոնների գավաթը՝ հաղթելով 2-0 հաշվով: Գոլերի հեղինակներ էին դարձել Սամուել Էտո'Օ-ն եւ Լիոնել Մեսին: Գվարդիոլան դարձել էր 6-րդը, որին հաջողվել էր չեմպիոնների գավաթակիր դառնալ թե որպես ֆուտբոլիստ, թե որպես մարզիչ: Նշենք, որ «Մանչեսթր Յունայթեդը» եզրափակիչում հանդես էր գալիս որպես գործող գավաթակիր: Նախորդ տարի Ալեխ Ֆերգյուսոնի սաները Մոսկվայի «Լուժնիկի» մարզադաշտում հեսխաղյա 11-մետրանոց հարվածներով (հիմնական ժամանակը՝ 1-1) պարտության էին մատնել «Ջելսիին»: Վճռորոշ պահին իրեն գերազանց էր դրսեւորել դարպասապահ Էդվին վան դեր Սարը՝ հետ մղելով Նիկոլա Անելկայի 11 մ հարվածը: Դա «Մանչեսթր Յունայթեդի» 3-րդ հաղթանակն էր չեմպիոնների գավաթի մրցաշարում: Ինչպես եւ «Բարսելոնը», անգլիական ակումբն էլ ապրայժմ 3 անգամ է նվաճել պատվավոր մրցանակը:

Առաջին հաջողությանը թիմը հասել է 1968-ին՝ Լոնդոնում 4-1 հաշվով պարտության մատնելով «Բենֆիկային»: «Մանչեսթր Յունայթեդն» անգլիական առաջին ակումբն էր, որ արժանանում էր չեմպիոնների գավաթին:

2-րդ հաջողությանը թիմը հասավ 31 տարի անց՝ 1999-ին չափազանց դրամատիկ պայքարում 2-1 հաշվով հաղթելով «Բավարիային» Բարսելոնի «Կամպ նոու» մարզադաշտում: Բասլերի խփած գոլի շնորհիվ «Բավարիան» հաղթում էր, սակայն վերջին րոպեներին փոխարինման դուրս եկած Թեդի Շերինգհեմն ու Օլե Գունար Սուլշերը 2 անգամ գրավեցին մրցակցի դարպասը:

Եվրոգավաթների մրցաշարերում «Բարսելոնն» ու «Մանչեսթր Յունայթեդը» մրցել են 10 անգամ: Թիմերը 3-ական հաղթանակ են տոնել, 4 խաղ ավարտվել է ոչ-ոքի: «Բարսելոնը» 7-րդ անգամ է հանդես գալու եզրափակիչում: Դրանցից երեքն (1992՝ «Սամպդորիա», 2006՝ «Արսենալ», 2009՝ «Մանչեսթր Յունայթեդ») ավարտվել են գավաթի նվաճմամբ: Իսկ ահա 1961-ին՝ «Բենֆիկայի», 1986-ին՝ «Սպյանուայի», 1994-ին՝ «Միլանի» հետ եզրափակիչ հանդիպումներն ավարտվել են մրցակիցների հաղթանակով:

«Մանչեսթր Յունայթեդի» համար հերթական եզրափակիչը կլինի 5-րդը: Առայժմ միայն 2009-ի եզրափակիչում են անգլիացիները պարտվել՝ զիջելով «Բարսելոնին»:

Լիլիթ Մկրտչյան. «Միշտ հանդիպում եմ բարի մարդկանց»

Մայիսի 7-ին Թբիլիսիում մեկնարկում է շախմատի կանանց Եվրոպայի անհատական առաջնությունը: Մրցաշարին Հայաստանի մի խումբ առաջատար շախմատիստուհիների հետ մասնակցում է նաեւ գրոսմայստեր Լիլիթ Մկրտչյանը: Մեկնարկից առաջ մենք փոքրիկ հարցազրույց ունեցանք Լիլիթի հետ:

- Ինչպե՞ս Ձեր մեջ առաջացավ սերը դեպի շախմատը եւ քանի՞ տարեկան էիք այդ ժամանակ:

- Այդ սերն ի հայտ եկավ պապիկս շնորհիվ, իմ մանկության օրերի մեծ մասն անցկացրել եմ նրա տանը: Նա շախմատի մեծ սիրահար էր, եւ երբ վեց տարեկան էի, իսկ եղբայրս ութ, որոշեց մեզ շախմատ սովորեցնել, եւ մենք գնացինք շախմատի դպրոց՝ Երրորդ մաս:

- Այդ տարիքում բացի շախմատ խաղալուց, ուրիշ սիրելի զբաղմունք ունեի՞ք:

- Այո, ես ու եղբայրս պապիկի եւ տատիկի միակ թոռնիկներն էինք եւ եթե մի բան ասում էինք, նրանք անպայման անում էին: Պապիկս մեզ տանում էր տարբեր խմբակների: Հիշում եմ, որ մի օր արթնացա եւ ասացի, որ նկարչության դասընթացների եմ ուզում գնալ, պապիկս տարավ, բայց մեկ ամիս անց այլեւս չգնացի:

- Ազատ ժամանակ ինչո՞վ եք սիրում զբաղվել:

- Սիրում եմ երաժշտություն լսել, ֆիլմեր նայել, հետաքրքրական հեռուստահաղորդումներ դիտել:

- Ի՞նչ երաժշտություն եք սիրում լսել:

- Հիմնականում սիրում եմ էստրադային երաժշտություն եւ նախընտրում եմ Ալլա Պուգաչովայի երգերը:

- Կա՞ ինչ-որ երգիչ, որի մեղեդիների տակ Դուք հանգստանում եք եւ կարողանում լավ շախմատ խաղալ:

- Ինձ համար սովորություն է դարձել յուրաքանչյուր մրցաշարից առաջ լսել Շառլ Ազնավուրի երգերը: Լսելով դրանք՝ հանգստանում եւ կենտրոնանում եմ:

- Տարբեր մրցաշարերի եք մասնակցում եւ բնականաբար լինում եք տարբեր երկրներում: Ո՞ր երկիրն է Ձեզ ավելի դուր եկել եւ ինչո՞ւ:

- Ջեմ ուզում առանձնացնել ինչ-որ երկիր: Պարզապես տարբեր երկրներում ստացել եմ յուրահատուկ տպավորություններ:

- Այն երկրներում, որտեղ Դուք եղել եք, որեւէ արտասովոր դեպք պատահե՞լ է:

- Արտասովոր դեպքեր հետս շատ են կատարվել, բայց պետք է առանձնացնեմ մեկը: Անցած տարի, շախմատի մրցաշարի մասնակցելու նպատակով մեկնել էի Չինաստան, որտեղից պետք է մեկնեի Հոնկոնգ, սակայն պարզվեց, որ դրա համար առանձին վիզա է անհրաժեշտ: Ես չգիտեի այդ մասին: Ինձ ասացին, որ առանց վիզայի ինձ հետ կուղարկեն: Բայց իմ բախտը միշտ բերում է. միշտ հանդիպում եմ բարի մարդկանց եւ այդ անգամ էլ հանդիպեցի մի բարի կնոջ, որն ինձ օգնեց լուծել բոլոր խնդիրները: Նրա օգնությամբ էլ կարողացա դուրս գալ այդ բարդ իրավիճակից:

- Կա՞ երկիր, որի միջավայրը ինքնին Ձեզ տրամադրում է, որ լավ խաղաք:

- Ոչ, կարծում եմ այդպիսի երկիր չկա: Լինում են այնպիսի երկրներ, որտեղ ամեն ինչ լավ է կազմակերպված. լավ ընդունում են, բայց չի ստացվում լավ խաղ ցուցադրել: Բայց, օրինակ, Հոնկոնգի դեպքում՝ չքնելով, չհանգստանալով, բավականին լավ խաղացի:

- Ձեզ հաջողություններ եմ մաղթում առաջիկա մրցաշարում:

Հարցազրույցը վարեց ԱՆԻ ՄՈՒՔՈՅԱՆԸ
Ուսանողուհի, ԵՊՀ

Անհաջող մեկնարկ

Թենիսի Հայաստանի կանանց հավաքականը պարտությամբ սկսեց Եգիպտոսում մեկնարկած ֆեդերացիայի գավաթի եվրոաֆրիկյան գոտու 2-րդ խմբի մրցաշարը: Մեր թենիսիստուհիները 1-2 հաշվով զիջեցին վրացիներին: Առաջինը կորց դուրս եկավ Օֆելյա Պողոսյանը, որի մրցակցուհին Տաթիա Միկաձեն էր: Երկու խաղափուլերն էլ միեւնույն 6-1 հաշվով շահեց վրացի թենիսիստուհին:

2-րդ մրցախաղում Անի Ամիրաղյանին հաջողվեց հավասարեցնել հաշիվը: Նա միեւնույն 6-4 հաշվով առավելության հասավ Սոֆյա Շամպատավայի նկատմամբ: Մրցամարտի ելքը վճռեց զուգախաղը: Ցավոք Ամիրաղյան-Պողոսյան զույգը պարտվեց Գորգոձե-Միկաձե երկյակին (2-6, 1-6):

Մեր թենիսիստուհիների հաջորդ մրցակիցը Թուրքիայի հավաքականն է, որը 0-3 հաշվով պարտվեց Բոսնիայի թիմին: Մյուս ենթախմբում ֆինները 2-1 հաշվով հաղթեցին Մարոկկոյի ընտրանուն:

Խաղաղ տուր

Երեկ Կազանի «Կորսոն» համալիրի դահլիճում մեկնարկեց շախմատի աշխարհի թագի հավակնորդների մրցաշարը: Շախմատիստներն իրենց մրցավեճը սկսեցին բեմում տեղադրված խաղասեղանների շուրջը: Բեմը դահլիճից առանձնացված է ապակե միջնորմով: Ընդ որում շախմատիստները ապակու միջով դահլիճը չեն տեսնում: Հանդիսականների համար էլ երկու մեծ էկրաններ են տեղադրված, որոնց վրա ցուցադրվում են պարտիաները:

Մեկնարկային տուրի բոլոր պարտիաներն էլ խաղաղ ելք ունեցան: Լեւոն Արոնյանը 6,5-ժամյա համառ պայքարից հետո սպիտակներով 70-րդ քայլում հաշտություն կնքեց Ալեխանդր Գրիշչուկի հետ՝ չկարողանալով օգտագործել անցողիկ զինվորի առավելությունը, որը հասել էր 6-րդ հորիզոնական: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Կամսկի-Թոփալով, Մամեդյարով-Գելֆանդ, Ռաջաբով-Կրամնիկ պարտիաները:

Մելֆուժյանն առաջատարներից մեկն է

Սարաեւոյում ընթացող շախմատի մրցաշարի 2-րդ տուրն էլ հաղթական էր Հրաչ Մելֆուժյանի համար: Հայ շախմատիստը պարտության մատնեց Ժասմին Բեջթովիչին եւ 6 միավորով 17 շախմատիստների հետ գլխավորեց աղյուսակը: Հիշեցնենք, որ այս մրցաշարում հաղթանակի համար տրվում է 3 միավոր, ոչ-ոքին գնահատվում է 1 միավոր:

3-րդ տուրում Մելֆուժյանը սպիտակներով կխաղա միջազգային վարպետ Մաթեյ Սեբենիկի հետ: Վերջինս եւս 2-րդ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Միրոսլավ Սոկոյին:

Վարդան Ոսկանյանը գլխավորեց ձյուդոյի ֆեդերացիան

Ձյուդոյի Հայաստանի ֆեդերացիայի նոր նախագահ է ընտրվել սամբոյի աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, ձյուդոյի խոշոր միջազգային մրցաշարերի հաղթող, բանակայինների խաղերի չեմպիոն, Եվրոպայի առաջնության մրցանակակիր, 2000-ի Սիդնեյի օլիմպիադայի մասնակից Վարդան Ոսկանյանը: Նա այդ պաշտոնում կփոխարինի ռումինացի Կոնստանտին Բոգդանին: Վերջինս անձնական խնդիրների պատճառով ստիպված է հայրենիք վերադառնալ, ուստի հրաժարական է ներկայացրել:

Կոնստանտին Բոգդանը Հայաստանի օլիմպիական կոմիտեում հաշվետվությամբ հանդես եկավ: Նրա կատարած աշխատանքը գնահատվեց բավարար: Ռումինացի մասնագետը շնորհակալություն հայտնեց բոլորին, ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանին, ձյուդոյի ֆեդերացիայի նախագահության անդամներին իր հետ համագործակցելու եւ իրեն վստահելու համար: ՀԱՕԿ-ի փոխնախագահ Հրաչյա Ռոստոմյանն էլ դրական գնահատելով ռումինացու կատարած աշխատանքը, շնորհակալություն հայտնեց նրան:

Երկկողմանի խաղ

Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականի երկօրյա ուսումնամարզական հավաքն ավարտվեց երկկողմանի խաղով: Հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը թիմը բաժանել էր երկու կազմի: Նորայր Գյոզալյանի խփած 2 գոլերը հաղթանակ պարգեւեցին առաջին կազմին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Ադրբեջանցիները փոխում են «պատմությունը»

«Ադրբեջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների պատմության դասագրքերում պետք է փոփոխություններ արվեն», ասել է Իլհամ Ալիեւի աշխատակազմի քաղաքական վերլուծությունների եւ տեղեկատվական ապահովման բաժնի վարիչ Էլնուր Ասլանովը:

«Մեզ հարկավոր է Ադրբեջանի պատմությունը եւ ազգային գաղափարը խորապես յուրացրած երիտասարդություն: Մենք պետք է հպարտություն զգանք «ես ադրբեջանցի եմ» ասելիս եւ այդ զգացմունքը փոխանցենք ուրիշներին մեր մտավոր ներուժի, ունակությունների եւ ստեղծագործության միջոցով», շարունակել է նա:

Իսկ ի՞նչ նպատակով է դա կանխաձրագվում: Ըստ Էլնուր Ասլանովի, «Ադրբեջանը, դառնալով տարածաշրջանի տնտեսական լիդեր, պետք է գլխավորող դիրքեր զբաղեցնի նաեւ մարդկային ներուժի առումով»: Այն էլ՝ «ոչ միայն տարածաշրջանում, այլեւ աշխարհում»:

Եթե այդպես դատեր մի ոմն Խալիլ Ռզա, ապա հնարավոր կլիներ հուսալ, որ «ցնդած բանաստեղծն» ընդամենը երազում է: Բայց սա, պարզվում է, «Ադրբեջանի երիտասարդությունը 2011-15թթ. »պետական ծրագրի սեղմագիրն է: Ծրագիր, որի հիմնական ուղղությունները «պետության ղեկավարին երկամյա ժամկետում ներկայացնելու» մասին համապատասխան գերատեսչություններին կարգադրություն է իջեցրել Իլհամ Ալիեւը:

Սեփական պատմությունը եւս մեկ անգամ «ճշտելուն» դեռ կարելի է համակերպվել: Թեեւ պետք է վստահ լինել, որ այդ «ճշտումը» կատարվելու է հարեւան ժողովուրդների՝ վրացիների, պարսիկների, լեզգիների, հայերի եւ այլոց հաշվին: Դա նորություն չէ: Ադրբեջանական «պատմագիտության» ակունքները պղտոր են ի սկզբանե:

Առավել վտանգավորն այն է, որ, ըստ Էլնուր Ասլանովի, Ադրբեջանը ծրագիր է մշակում եւ կյանքի է կոչելու, որպեսզի «մտավոր ներուժի, ունակությունների եւ ստեղծագործության միջոցով ուրիշներին եւս փոխանցի «ես ադրբեջանցի եմ» հպարտությունը»: Այսինքն, տարածաշրջանի, իսկ հեռանկարում՝ նաեւ աշխարհի ժողովուրդները պետք է «հպարտությամբ զգաստ կանգնեն եւ բացականչեն». «Ես ադրբեջանցի եմ»:

Եվ դա պետք է «տեղի ունենա», քանի որ «Ադրբեջանը դարձել է տարածաշրջանի տնտեսական լիդերը»:

Ի՞նչ է սա, եթե ոչ ակնհայտ ֆաշիզմ: Կամ, ավելի մեղմ ասած, խենոֆոբիա՝ ատելություն այլոց հանդեպ եւ սեփական «բացառիկության» պաշտամունքի արմատավորում երիտասարդության շրջանում: Այն էլ՝ պետական-նպատակային ծրագրով:

Պատկերացնո՞ւմ եք, որ հազարամյակների մշակութային եւ ավանդութային ու գիտական, նոր ժամանակների տնտեսական եւ զուտ ժողովրդագրական ներուժով նման մի ծրագիր ընդունի Չինաստանը, երկիր, որ ոչ միայն տարածաշրջանում, այլեւ ողջ աշխարհում առաջնակարգ դիրքեր ունի: Եվ «ես չինացի եմ» հպարտությունն այդ բոլոր հնարավորություններով «փոխանցի նաեւ ուրիշներին՝ տարածաշրջանում եւ աշխարհում»: Կամ՝ Ճապոնիան: Կամ՝ Ռուսաստանը, Միացյալ Նահանգները: Հնդկաստանը: Կամ էլ «ես արաբ եմ» հպարտությամբ միավորվի ողջ արաբական աշխարհն ու այդ հպարտությունը «փոխանցի հրեաներին»:

Թվարկած բոլոր երկրներն, այնինչ, սեփական ազգային հպարտությունը, պատմությունը, մշակույթն ու ավանդույթները փայփայում են բացառապես իրենց ազգային պետության սահմաններում: Եվ դրանից դուրս՝ հարգում այլոց՝ իրենց «ԵՍ»-ով հպարտանալու, իրենց պատմությունն ու մշակույթը գուրգուրելու իրավունքը: Քանի որ համակեցության աղբյուրն այլոց հանդեպ հանդուրժողականությունն է, բայց երբեք՝ մեկի ազգային հպարտությունը մյուսին պարտադրելը:

Ադրբեջանում, սակայն, որեւէ օրինաչափություն օրինաչափություն չէ, եթե Իլհամ Ալիեւի «ամենագեղ մտքով» չի հաստատվում: Իսկ այդ «միտքը» վերջերս հանգել է նրան, որ «թուրքական միասնական աշխարհի տրոհումը 20-րդ դարի մեծագույն անարդարությունն է»: Եվ որոշել է «վերականգնել պատմական արդարությունը»՝ ամբողջ տարածաշրջանին «փոխանցելով «ես ադրբեջանցի եմ»,- պետք է հասկանալ՝ «ես թուրք եմ», քանի որ նման կարգախոսով է առաջնորդվում ավագ եղբայր Թուրքիան,- հպարտությունը»:

Իսկ տարածաշրջանի ժողովուրդներին «թուրքացնելուց հետո» նա մտադիր է «ինտելեկտուալ առաջնակարգ դիրքեր գրավել» արդեն ամբողջ աշխարհում: Ճիշտ է ասում Թուրքիայի նախագահ Գյուլը, երբ ակնարկում է, թե մոտ ժամանակներս Թուրքիան ինքը չի ցանկանա դառնալ Եվրոմիության անդամ: Ինչո՞ւ պիտի ցանկանա, եթե Իլհամ Ալիեւն «ամբողջ աշխարհը թուրքացնելու» պետական-նպատակային ծրագիր է մշակում: Երեւի՝ Թուրքիայի հուշարարությամբ:

Իսկ «միամիտ» եվրոպացիները փորձում են համոզել, որ «պանթուրքիզմ չկա»: Հավանաբար դրանով միայն իրենց են աշխատում հանգստացնել:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ի՞նչ է ուզում Մեթյու Բրայզան Ադրբեջանի շրջաններից

1-ին էջից

Եթե նախագահ Ալիեւի՝ շրջաններ այցելությունը բնական է թվում, ապա ամերիկյան դեսպանի ուղեւորությունը, հատկապես այս ժամանակներում եւ հատկապես այդ վայրեր, ուշագրավ է: Ի դեպ, խաղաղության կորպուսի հիմնական նպատակներն են՝ խաղաղության հաստատումն ամբողջ աշխարհում, նպաստել տվյալ երկրի հասարակությանը՝ ամերիկյան արժեքներին ծանոթանալուն, եւ օգնել ամերիկացիներին՝ ճանաչելու տվյալ երկրի արժեքները: Ադրբեջանում խաղաղության կորպուսը հաստատվել է 2003-ից, այդ պահից մինչ այսօր հարեւան երկիր «առաքելությամբ» ժամանել են 368 ամերիկացի կամավորներ:

Իսկ այժմ փորձենք հասկանալ, թե ինչո՞ւ Բրայզան իր այցելության համար ընտրեց հատկապես այս ժամանակը, չէ՞ որ Խաղաղության կորպուսի 50-ամյակը մեկ օրում կամ շաբաթում չեն նշում, կարելի է նշել ամբողջ տարվա ընթացքում:

Կրկին վերադառնանք Թբիլիսիում կայացած «ամերիկյան դեսպանների հավաքին»: Ինչպես արդեն նշել ենք, նույն այդ օրերին Ռուսաստանի Իսլամիստական կոմիտեի նախագահ Հեյդար Ջամալը հայտարարեց, թե «Արեւմուտքը Ադրբեջանում ամենաբարձր մակարդակով իշխանափոխություն է նախաձեռնում, եւ դրա համար պետք է օգտագործվի ԱՄՆ դաշնակից Վրաստանի տարածքը»: Անշուշտ՝ պատշոնական Թբիլիսին անմիջապես «անհեթեթություն» որակեց Ջամալի հայտարարությունը: Սակայն երեկ վրացական apsny.ge լրատվական կայքը մեջբերեց այդ երկրի լեյբորիստական կուսակցության գլխավոր քարտուղար Սոսո Շաբերաշվիլիին: Վերջինս նշել է, որ ադրբեջանական մամուլում տեղ գտած տեղեկությունները վկայում են, որ «Թբիլիսիում Բրայզան հանդիպումներ է ունեցել նաեւ Վրաստանի նախագահի եւ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հետ եւ այդ հանդիպումների ընթացքում քննարկել Ադրբեջանի նախագահին պատշոնական անելու սցենարները»: Շաբերաշվիլին հավելել է, որ ինքը դիմել է ԱՄՆ Սենատին, որպեսզի Բրայզային վերջինս չհաստատի Բաքվում ԱՄՆ դեսպանի պատշոնում: Հիշեցնենք՝ այս աշնանը Սենատն այդ հնարավորությունն ունի: Վրացի լեյբորիստը անգամ հորդորել է Իլհամ Ալիեւին, որ նա Բրայզային ագրեման չտրամադրի: «Այս ամենից հետո» Բրայզան վերադառնում է Ադրբեջան եւ հանդես գալիս հայտարարությամբ, որի մասին «Ազգն**» արդեն գրել է. «Ադրբեջանի իշխանությունները հասկացան, որ Ադրբեջանն ուժեղ ու անկախ կլինի, կկարողանա ապահովվել իր ապագան, եթե կշարունակի հարաբերությունները զարգացնել ԱՄՆ-ի եւ եվրոպական երկրների հետ»: Իսկ եթե Բաքուն որոշի չշարունակել հարաբերությունների խորացումը ԱՄՆ-ի եւ եվրոպական երկրների հետ, Բրայզան, հիշեցնելով Նախիջեւանում օրեր առաջ իր հայտարարությունը, թե «հաջորդ այցի ընթացքում, հուսով եմ, կկարողանամ այցելել նաեւ Զուղա եւ տեսնել այնտեղի խաչքարերը, որոնց մասին քննարկումների մասնակից եմ եղել Երեւանում», միգուցե եւ ավելի վճռական գործողությունների դիմի: Չէ՞ որ ադրբեջանական շրջաններ այցելելը, դրանց գործադիր իշխանությունների հետ հանդիպելը եւ վերջիններիս հետ նաեւ «այլ հարցեր» քննարկելը կարելի է եւ հասկանալ որպես Բրայզայի (ԱՄՆ-ի) կողմից Ադրբեջանի շրջաններում «նախահեղափոխական» իրավիճակին ծանոթանալու փորձ:**

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն

▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

ԾՐԱԳԻՐ-ՆԱԽԱԳԻԾ

«Նոյյան տապանը» կդառնա Հայաստանի բրենդը

Մի քանի տարի հետո «Հաղթանակ» զբոսայգում վեր է խոյանալու նոր կառույց, որը լինելու է ոչ թե հյուրանոց կամ սուպերմարկետ, այլ «Նոյյան տապանը»: Սա լինելու է մշակութային կենտրոն, որը մտահղացման հեղինակների խոսքով՝ եզակի է լինելու ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում: «Նոյյան տապան» կառուցելու գաղափարը «Արմարե» եւ «Ուրախ ժամանց» ընկերությունները՝ հանձինս տնօրենների: Ըստ պարոն Ումրիկյանի՝ նախնական հաշվարկներով կծախսվի ավելի քան 10-15 միլիոն դոլար. «Սակայն երկուսով կկարողանանք տեղավորվել միայն մինչեւ 3-5 միլիոն դոլարի շրջանակներում, իսկ մնացածի համար կդիմենք այլ կազմակերպությունների, որոնք «Նոյյան տապանում» մեր ծրագրին համահունչ բիզնես սկսելու ցանկություն կունենան»: Մարտուն Հարությունյանն էլ նշում է, որ նորակառույցը ոչ միայն կնպաստի տուրիզմի զարգացմանը, այլեւ նոր աշխատատեղերի ստեղծմանը ինչպես կառուցման, այնպես էլ շահագործման ընթացքում: Ապա անդրադառնալով «Նոյյան տապանի» հետագա շահագործման ու սպասարկման աշխատանքներին՝ պարոն Հարությունյանը հավելում է, որ դրանցով եւս զբաղվելու են «Ուրախ ժամանց» եւ «Արմարե» ընկերությունները:

Զրուցակիցներս նշում են, որ կառույցը քաղաքի, առհասարակ երկրի բրենդներից է դառնալու, եւ «Նոյյան տապանը» ոչ միայն կավելացնի զբոսայգու այցելուների թիվը, այլեւ արտասահմանից զբոսաշրջիկների հոսք կբերի Հայաստան: «Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ շնորհիվ այս կառույցի Հայաստան եկող զբոսաշրջիկների թիվը 20 տոկոսով կավելանա», նշում է պարոն Ումրիկյանը:

Նոյյան տապանի կրկնօրինակներ կան նաեւ այլ երկրներում, սակայն այստեղ կառուցվող Նոյյան տապանն իր լուծումներով եւ մոտեցումներով միանգամայն տարբեր է լինելու. ունենալու է հենց բնօրինակի չափսերը՝ երկարությունը կլինի 132 մետր, լայնությունը՝ 22 մ, իսկ բարձրությունը՝ 13,5 մետր: «Նոյյան տապանի» ներսում ինքնաշխատ քանդակներով թանգարան կլինի, իսկ քանդակները կպատկերեն Նոյյան տապանի անձնակազմը: Այստեղ կլինեն նաեւ կենդանիների քանդակները, որոնց չափսերը համապատասխանելու են կենդանիների իրական չափսերին: Մեծ քանդակները դրվելու են դրսում, պատկերվելու է տեսարան, թե ինչպես են կենդանիները շարժվում դեպի Նոյյան տապանը: Մարտուն Հարությունյանը պատմում է, որ ամեն ինչ պատկերվելու է այնպես, ինչպես գրված է Աստվածաշնչում: Իսկ տապանի ներսում, բացի թանգարանից, լինելու են նաեւ ցուցասրահներ, կինոդահլիճ, հյուրասիրությունների սրահ եւ այլն: Տապանի ներսի ընդհանուր տարածքը լինելու է շուրջ 10 հազար քմ: Հիմնականում կառուցվելու է բնական փայտից, որը բերվելու է Ռուսաստանից:

Մարտուն Հարությունյանը հավելում է. «Նպատակահարմար գտանք կառուցել «Նոյյան տապան», ոչ թե այլ կառույց, որովհետեւ ուզում ենք աշխարհին ցույց տալ, որ ջրհեղեղից հետո մարդկության վերածնունդը հայոց աշխարհից ու Արարատ լեռից է սկսվել»: Օրինակ՝ Հոլանդիայում նույնպես կա «Նոյյան տապան», որը մի տարում շուրջ 400 հազարով ավելացրել է երկրի զբոսաշրջիկների թիվը: Ըստ պարոն Ումրիկյանի՝ սա մոտավորապես 3 անգամ փոքր է, քան այն կրկնօրինակը, որը կառուցվելու է Հայաստանում: Ինչ վերաբերում է կառուցման ծախսերին, դրանք հոգալու են «Արմարե» եւ «Ուրախ ժամանց» ընկերությունները՝ հանձինս տնօրենների: Ըստ պարոն Ումրիկյանի՝ նախնական հաշվարկներով կծախսվի ավելի քան 10-15 միլիոն դոլար. «Սակայն երկուսով կկարողանանք տեղավորվել միայն մինչեւ 3-5 միլիոն դոլարի շրջանակներում, իսկ մնացածի համար կդիմենք այլ կազմակերպությունների, որոնք «Նոյյան տապանում» մեր ծրագրին համահունչ բիզնես սկսելու ցանկություն կունենան»: Մարտուն Հարությունյանն էլ նշում է, որ նորակառույցը ոչ միայն կնպաստի տուրիզմի զարգացմանը, այլեւ նոր աշխատատեղերի ստեղծմանը ինչպես կառուցման, այնպես էլ շահագործման ընթացքում: Ապա անդրադառնալով «Նոյյան տապանի» հետագա շահագործման ու սպասարկման աշխատանքներին՝ պարոն Հարությունյանը հավելում է, որ դրանցով եւս զբաղվելու են «Ուրախ ժամանց» եւ «Արմարե» ընկերությունները:

Զրուցակիցներս ասում են, որ «Նոյյան տապան» կառուցելու ծրագիրը ներկայացրել են Երեւանի քաղաքապետարան, որտեղ ծրագիրը հիմա քննարկման փուլում է: Պարոն Ումրիկյանն ու Մարտուն Հարությունյանը նաեւ դիմել են Ամենայն հայոց կաթողիկոսին, որպեսզի Վեհափառ հայրապետից նույնպես համաձայնություն եւ օրհնություն ստանան: «Եթե շինթույլտվությունը շուտ ստանանք, առավելագույնը 2 տարում կկարողանանք կառուցել», ավելացնում է պարոն Ումրիկյանը:

Թե զբոսայգու կոնկրետ ո՞ր հատվածում կկառուցվի «Նոյյան տապանը», հստակ պարզ չէ: Տեղի համար 2 նախնական տարբերակներ արդեն ընտրված են, հենց դրանք էլ ներկայացվել են քաղաքապետարան, որտեղ հիմա քննարկում են տեղ հատկացնելու հարցը: «Ամեն դեպքում նախատեսված է կառուցել այնպիսի հատվածում, որպեսզի երեւա Արարատ լեռան ստորոտից, ե՛ւ քաղաքի տարբեր կետերից», ասում է Մ. Հարությունյանը: Հատկանշական է, որ տարբեր վայրերից տապանն աչքի կընկնի նաեւ իր լուսային էֆեկտներով: Ըստ Թ. Ումրիկյանի՝ մի քանի տարի առաջ որոշել են «Նոյյան տապանը» կառուցել Խոր Վիրապում, բայց հետո նպատակահարմար չեն գտել. «Հրաժարվելու պատճառներից մեկն էլ այն էր, որ մայրաքաղաք ավելի շատ զբոսաշրջիկներ են գալիս»:

Զրուցակիցներս համոզված են՝ տարիներ հետո «Նոյյան տապանը» կդառնա քաղաքի սիրելի վայրերից մեկը, եւ զբոսայգու գոնե այդ հատվածը որեւէ «անիմաստ» շենքի համար չի վաճառվի: Պարոն Հարությունյանը չի բացառում. «Եթե չկառուցենք «Նոյյան տապանը», միգուցե 20 տարի հետո այդ տեղում հյուրանոց կամ ուրիշ շենք կառուցվի»: Ասածը փաստելու համար Թորոս Ումրիկյանն էլ ավելացնում է, որ մինչեւ 1988-90 թվականները զբոսայգին 110 հա տարածք է ունեցել, որից այսօր մնացել է ընդամենը 28 հա:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻՐ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 5.5.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: